# Քրիստոնյա Հայաստան

2011, ՕԳՈՍՏՈՍ Բ, ԹԻՎ 16 (348)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ


## Հայրապետական մաղթանք՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդյան 60-րդ տարեդարձի առիթով

Օգոստոսի 21-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ ներկայությամբ Հայաստանի թեմական առաջնորդների եւ Մայր Աթոռի ողջ միաբանության, մատուցվեց Պատարագ: Պատարագիչն էր Երեւանի Սբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու հոգեւոր տեսուչ Տ. Անուշավան եպս Ժամկոչյանը:

Պատարագիչ սրբազանն իր քարոզում որդիական ջերմ սիրով ու խոնարհումով Մայր Աթոռի միաբանության եւ հավատացյալ ժողովրդի անունից շնորհավորական խոսք ուղղեց Վեհափառ Հայրապետին՝ ծննդյան 60-ամյակի կապակցությամբ՝ մաղթելով կյանքի երկար արեւշատ օրեր եւ բեղուն գահակալություն՝ շարունակելու հաջողությամբ հովվել համայն հայությանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդյան տարեդարձի առիթով քարոզից հետո Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգեւ արք. Մարտիրոսյանի հանդիսապետությամբ կատարվեց Հայրապետական մաղթանք: Եկեղեցականները եւ հավատացյալ ժողովուրդը հայցեցին Ամենակալ Աստծուն անսասան պահել ու պահպանել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն ու նրա արժանընտիր ու բազմաշխատ գահակալին՝ պարգեւելով կորով եւ զորություն՝ իրականացնելու հայրապետական աստվածահաճո եկեղեցաշեն ծրագրերը՝ ի պայծառություն առաքելաhիմն մեր Սբ Եկեղեցու եւ ի մխիթարություն բարեպաշտ մեր ժողովրդի:



Պատարագի ավարտին հոգեւորականաց թափորը Նորին Սրբությանն ուղեկցեց Վեհարան, ուր եպիսկոպոսաց դասը եւ միաբանության անդամները վերստին շնորհավորեցին եւ իրենց բարեմաղթանքները բերեցին Ամենայն Հայոց Հայրապետին:

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

### Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

_23 օգոստոսի_

### Նկարիչների միջազգային փառատոնի մասնակիցներին



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Հայկական ներկապնակ» նկարիչների միջազգային փառատոնի մասնակիցներին՝ ուղեկցությամբ Սերգո Երիցյանի եւ Հայաստանի նկարիչների միության նախագահ Կարեն Աղամյանի:

Ողջունելով փառատոնի մասնակիցներին՝ Նորին Սրբությունն իր գնահատանքն ու օրհնությունը բերեց կարեւոր այս նախաձեռնության կազմակերպիչներին: Ամենայն Հայոց Հայրապետը կարեւորեց նման միջոցառումների անցկացումը, որոնք զորացնում են ժողովուրդների միջեւ մշակութային կապերը՝ այդպիսով նպաստելով եղբայրության եւ համագործակցության առավել ամրապնդմանը: Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ միջազգային այս փառատոնը շարունական կդառնա՝ առիթ ընձայելով արվեստագետների նորանոր շփումների եւ փորձի արդյունավետ փոխանակման:

Հանդիպմանը նաեւ անդրադարձ կատարվեց Մայր Աթոռ Սբ Էջմիածնի թանգարաններում պահվող գեղանկարներին, դրանց համալրման, ընտրության եւ ձեռքբերման սկզբունքներին: Նորին Սրբությունը նկարիչներին տեղեկացրեց նաեւ, որ առաջիկայում Մայր Աթոռում իբրեւ «Խրիմյան» թանգարանը, ուր ցուցադրվելու են ինչպես Արշիլ Գորկու նկարները, այնպես էլ ժամանակակից հայ նկարիչների ստեղծագործություններ:

_24 օգոստոսի_

### ՀԲԸՄ-ի երիտասարդական ծրագրերի մասնակիցներին

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայկական բարեգործական ընդհանուր միության «Բացահայտիր Հայաստանը» եւ «Հայաստան՝ կյանքի երկիր» երիտասարդական խմբերի անդամներին: Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի, Բելգիայի, Սիրիայի եւ այլ երկրների հայկական համայնքներից հայրենիք ժամանած երիտասարդները մասնակցում են Հայաստանի տարբեր մարզերում իրականացվող բարեգործական տարբեր ծրագրերին:

Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց, որ Հայկական բարեգործական ընդհանուր միությունը երիտասարդ հայորդիներին տարբեր երկրներից համախմբում է Հայաստանում, որպեսզի նրանք ճանաչեն իրենց հայրենիքը, հաղորդ դառնան երկրի ե՛ւ դժվարություններին, ե՛ւ տեսիլքներին, փորձեն հասկանալ, թե ինչպես եւ որքանով կկարողանան մասնակցել երկրի կառուցմանը եւ առաջընթացին:

Նորին Սրբությունը, դիմելով երիտասարդներին, մասնավորաբար նշեց. *«Եկեղեցին է, որ առավել չափով ձեզ համար կբացի մեր ազգային-հոգեւոր արժեքների աշխարհը, որովհետեւ դարեր շարունակ այդ արժեքները, մեր ժողովրդի հոգին, նկարագիրը, մեր ժողովրդի իղձերը, երազներն ու հույսերը կերտվել են Եկեղեցու հարկի ներքո, Եկեղեցու օրհնության եւ առաջնորդության ներքո: Պատահական չէ, որ մեր ազգի զավակներն այդքան կապված են Եկեղեցուն, սիրում են Եկեղեցին, քանի որ Եկեղեցին իրենց ինքնության եւ գոյության երաշխիքն է»* եւ հավելեց, որ ինքնախաբեություն է այն մտածումը, որ մեկը կարող է լինել լիարժեք հայ, արժանի ժառանգը իր նախնիների՝ հեռու մնալով իր Եկեղեցուց, իր հայրերի հավատքից, իր հոգեւոր արժեքներից եւ իր ազգային-եկեղեցական սովորույթներից:



Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատգամեց երիտասարդներին առավել նախանձախնդիր լինել եկեղեցի այցելելու, եկեղեցական կյանքի մեջ ներգրավվելու հարցում եւ եկեղեցական կյանքի միջոցով օգտակարություն ունենալ համայն հայ ժողովրդին:

Նորին Սրբությունը վերստին իր գնահատանքը բերեց Հայկական բարեգործական ընդհանուր միությանը, որը միշտ աջակից ու զորակից է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին եւ Հայ Եկեղեցու սրբազան առաքելությանը:

*Շարունակությունը՝ էջ 2*

# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

*Սկիզբը՝ էջ 1*

## Ֆրանսիայի «Միություն՝ հանուն ժողովրդական շարժման» կուսակցության խորհրդարանական պատվիրակության անդամներին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայի «Միություն՝ հանուն ժողովրդական շարժման» կուսակցության խորհրդարանական պատվիրակության չորս անդամներին՝ Վալերի Բուայեին, Գի Տեսիեին, Ժորժ Կոլումբիեին եւ Ժակ Ռեմլիեին:

Զրույցի ընթացքում պատվիրակության անդամները Նորին Սրբությանը ներկայացրեցին Հայաստան եւ ԼՂՀ կատարած իրենց այցի տպավորությունները: Անդրադարձ կատարվեց երկու երկրների ու ժողովուրդների միջեւ առկա ջերմ բարեկամական հարաբերություններին:

Հանդիպմանը խոսվեց նաեւ Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու ներկայիս գործունեության եւ միջեկեղեցական հարաբերությունների, ինչպես նաեւ խորհրդային շրջանից ժառանգած մարտահրավերների եւ հետեւանքների մասին:

*28 օգոստոսի*

## Ավստրիայի Ինսբրուկ քաղաքի առաջնորդին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ավստրիայի Ինսբրուկ քաղաքի հոգեւոր առաջնորդ Մանֆրեդ եպս Շոյերի գլխավորած ուխտավորների խմբին: Խմբի կազմում էին ուխտավորներ Ավստրիայի տարբեր համայնքներից, ինչպես նաեւ Ինսբրուկ քաղաքի «Տիրոլեր Սոննթագ» եկեղեցական օրաթերթի ընթերցողներ:

Ուխտավորների անունից Մանֆրեդ եպիսկոպոսը երախտագիտություն հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ հայության հոգեւոր կենտրոն այցելության եւ ջերմ ընդունելության համար՝ ուրախություն հայտնելով հայկական հարուստ քրիստոնեական մշակույթին եւ պատմությանը ծանոթանալու հնարավորության պատեհությամբ:

Այնուհետեւ ուխտավորների խմբին իր օրհնությունը բերեց Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունն անդրադարձավ Հայ Եկեղեցու եւ քրիստոնեական հավատի կարեւոր դերակատարությանը հայ ժողովրդի կյանքում, անդրադարձավ նաեւ ներկայիս հոգեւոր վերազարթոնքին եւ Եկեղեցու առջեւ ծառացած մարտահրավերներին:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուխտավորներին ներկայացրեց վերջին տարիներին Հայ Եկեղեցու կյանքում արձանագրված ձեռքբերումները՝ ժողովրդի քրիստոնեական դաստիարակությանն ուղղված ծրագրերը, նոր եկեղեցականների պատրաստությունը, զանազան սոցիալական ծրագրերը, հարյուրից ավելի պատմական վանքերի ու տաճարների վերանորոգումն ու նոր եկեղեցիների կառուցումը:

## Կաթոլիկ ուխտավորներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Կաթոլիկ Եկեղեցու Ավստրիայի Գրաց Սեկուա եւ Գուրկի թեմերից Հայաստան ժամանած 37 ուխտավորների՝ առաջնորդությամբ Բադ Սուզեի հոգեւոր հովիվ հայր Էդմունդ Մուհրերի: Խմբի Հայաստան այցելության նպատակը հայ ժողովրդի հոգեւոր եւ մշակութային արժեքներին հաղորդակից դառնալն էր:

Ողջունելով ուխտավորներին՝ Վեհափառ Հայրապետն իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց խմբի անդամներին: Նորին Սրբությունն իր խոսքում անդրադարձավ Ավստրիայում իր ուսումնառության տարիներին եւ հիշողություններին:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետը պատասխանեց նաեւ ուխտավորներին հետաքրքրող հարցերին, որոնք հիմնականում վերաբերում էին եկեղեցի-պետություն հարաբերություններին, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ծիսական եւ էկումենիկ կյանքին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն Տ. Հովակիմ եպս Մանուկյանը կաթոլիկ ուխտավորներին հանգամանորեն ներկայացրեց Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու հարաբերությունները քույր Եկեղեցիների, մասնավորապես Կաթոլիկ Եկեղեցու հետ, տեղեկացրեց երկու Եկեղեցիների միջեւ առկա համագործակցության մասին՝ սոցիալական ոլորտում:

Հանդիպումից հետո ուխտավորները Մայր տաճարում մասնակցեցին Սբ Պատարագի արարողությանը:

# Կատարվեց Մայր Աթոռի Սբ Հրեշտակապետաց եկեղեցու խաչերի օծման արարողությունը



Օգոստոսի 23-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հարեւանությամբ կառուցված Սբ Հրեշտակապետաց եկեղեցու խաչերի օծման արարողությունը:

Սբ Հրեշտակապետաց եկեղեցու հիմնարկեքը կատարվել է 2007 թվականի սեպտեմբերի 10-ին: Եկեղեցու բարերարն է Հայաստանի շինարարների միության նախագահ Գագիկ Գալստյանը, եկեղեցու ճարտարապետը՝ Ջիմ Թորոսյանը: Շինարարությունն իրականացնում է «Հորիզոն 95» ՍՊԸ-ն:

Եկեղեցականների թափորն Ամենայն Հայոց Կաթողիկոսին Վեհարանից առաջնորդեց դեպի նորակառույց եկեղեցի, ուր եկեղեցու առջեւ դրված խաչերի մոտ սկսվեց օծման արարողությունը: Սաղմոսների ներքո եկեղեցականները ջրով եւ գինով լվացին եկեղեցու խաչերը, ապա սուրբգրային ընթերցումներից եւ աղոթքներից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը սրբալույս մեռոնով օծեց եկեղեցու գմբեթի խաչը: Մնացյալ չորս խաչերն օծեցին «Սբ Ներսես Մեծ» հիվանդանոցի հոգեւոր տեսուչ Տ. Տաթեւ արք. Սարգսյանը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպս Խաչատրյանը, վանորեից տեսուչ Տ. Արտակ եպս Տիգրանյանը եւ Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն Տ. Հովակիմ եպս Մանուկյանը:

Այնուհետեւ «Խաչի քո Քրիստոս» շարականի երգեցողության ներքո Մայր Աթոռի լուսարարպետի պաշտոնակատար Տ. Հովնան վրդ. Հակոբյանը կատարեց խնկարկություն, ապա Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ եկեղեցականները եւ հավատացյալ ժողովուրդը մոտեցան եւ երկրպագելով համբուրեցին նորաօծ խաչերը:

Արարողության ավարտին ներկաներին իր օրհնության խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Ուրախություն հայտնելով արարողության առիթով՝ Նորին Սրբությունը մասնավորաբար նշեց. «Ահա այն գեղեցիկ պահն է, երբ խաչերի օրհնությունից հետո հավատավոր զավակները կարող են մոտենալ եւ երկրպագել օծյալ այս խաչերին՝ հաղորդակից դառնալով այն առատ օրհնությանը, որ ճառագում է խաչերից դեպի ձեզ»: Վեհափառ Հայրապետը մաղթեց, որ Տիրոջ այդ օրհնությամբ լուսավորվեն հավատացյալների հոգիները, եւ այն տարածվի նրանց կյանքից ներս, որպեսզի փառաբանության, աստվածսիրության եւ հայրենասիրության գեղեցիկ զգացումները միշտ ապրեն նրանց հոգիներում եւ սրտերում:

Վերջում Նորին Սրբությունն իր օրհնությունն ու գնահատանքը բերեց եկեղեցու բարերարին ու ճարտարապետին:

# Օծվեց Սուրբ Բարսեղ Կեսարացի եկեղեցին

Օգոստոսի 20-ին Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն եպս Ադամյանի ձեռամբ եւ մասնակցությամբ Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Աշոտ եպս Մնացականյանի եւ Արմավիրի թեմի հոգեւորականների կատարվեց Նոր Կեսարիա համայնքի Սուրբ Բարսեղ Կեսարացի եկեղեցու օծումը: Սուրբ արարողությանը ներկա էին Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանը, Արմավիրի մարզի դատախազը, Արմավիր քաղաքի քաղաքապետը, համայնքապետը եւ բազմաթիվ հյուրեր, թեմի երիտասարդաց միության անդամներ, Նոր Կեսարիայի բնակիչներ:

Արմավիրի թեմի Նոր Կեսարիա համայնքում 2009 թվականից եգիպտաբնակ Բարսեղ Գըզըլյանի բարերարությամբ սկսվել էր Սբ Բարսեղ Կեսարացի բազիլիկ եկեղեցու կառուցումը: Բարերարը, լինելով պատմական Կեսարիա գյուղից, 2003-ին գտնվելով Հայաստանում, տեղեկացվել էր, որ Արմավիրի տարածաշրջանում կա Նոր Կեսարիա անվամբ գյուղ, այստեղ էլ որոշեց կառուցել մի սրբավայր, որը կդառնար համայնքի աղոթատունը:



Եկեղեցու օծման արարողությունից հետո, թե՛ բարերարին եւ թե՛ հավաքված հյուրերին իրենց օրհնության եւ շնորհակալության խոսքերը հղեցին Արմավիրի եւ Եգիպտոսի թեմերի առաջնորդները՝ շեշտելով, որ ուրախ են, որ այսուհետ Հայ Եկեղեցու արարողությունները եւ հարազատ ավանդույթները կդառնան նաեւ այս համայնքի բնակիչների ամենօրյա կյանքի մասը եւ ամենակարեւորը՝ հոգեւոր վերանորոգության շունչ կհաղորդեն բնակիչներին:

Եկեղեցու օծմանը հաջորդեցին մատաղօրհնությունը, ազգային երգն ու երաժշտությունը՝ կազմակերպված համայնքապետարանի կողմից:

*Առաջնորդարան*
*Արմավիրի թեմի*

# Վրաստանի հայ նկարիչների հիմնադիր ժողովը

Վիրահայոց թեմի առաջնորդարանում «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամի հովանավորությամբ անցկացվեց Վրաստանի հայ նկարիչների միության կազմավորման հիմնադիր ժողովը, որին մասնակից դարձան Թբիլիսիից եւ Սամցխե-Ջավախքից ժամանած գեղանկարիչներ, մանրանկարիչներ, քանդակագործներ, արվեստի այս ճյուղը ներկայացնող այլ գործիչներ: Ժողովը բացվեց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպս Միրզախանյանի օրհնության խոսքով: Սրբազանը հայտնեց նաեւ, որ «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամի աջակցությամբ կենտրոնում կստեղծվեն միության արդյունավետ գործունեությանը նպաստող անհրաժեշտ բոլոր պայմանները:

Ժողովի ընթացքում մասնակիցներից յուրաքանչյուրը հանդես եկավ գործնական առաջարկով:



Ժողովն ընթացավ գործնական մթնոլորտում: Ավարտին, ներկաների միաձայն քվեարկությամբ հիմնադրվեց Վրաստանի հայ նկարիչների միությունը՝ համապատասխան միավորումներով: Միության նախագահ ընտրվեց ճանաչված եւ բազմավաստակ մանրանկարիչ Մերուժան Շահումյանը:

Համաժողովը ընտրեց նաեւ նկարիչների միության գեղարվեստական խորհրդի նախագահ, որի պարտականություններն ստանձնեց Լեւոն Օսիպովը:

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՆԱՀԱՊԵՏ Ա ԵԴԵՍԱՑԻ (1691-1705)

*Սկիզբը՝ թիվ 14-15*

Այդ շրջանում է, որ սկսվում է Մխիթար Սեբաստացի սարկավագի գործունեությունը: Մխիթար Պետրոսյանը կամ մինչեւ ձեռնադրվելը՝ Մանուկը ծնվել է 1676 թվի փետրվարի 7-ին Սեբաստիա քաղաքում: Սկզբնական կրթությունն ստանում է տեղում՝ հայ քահանաների եւ վարդապետների մոտ: Հետո դառնում է Սբ Նշան վանքի միաբան՝ 1685-ին որպես դպիր, իսկ 1691-ին՝ սարկավագ՝ ձեռնադրվելով վանքի առաջնորդ Անանիա եպիսկոպոսի կողմից: Մայր Աթոռ մտնելու փափագով դառնում է փոքրավոր՝ Միքայել եպիսկոպոսի մոտ: Եպիսկոպոսի հետ 1691 թվի դեկտեմբերին Կարնի վրայով գալիս է Էջմիածին՝ տեղ հասնելով 1692 թվի փետրվարին: Կարնում նա գտնում է «Խոկումն քրիստոնէական» լատիներենից հայերեն թարգմանված գիրքը (Վենետիկ, 1687), որը լիակատար հռոմեադավանություն էր քարոզում: Միքայել եպիսկոպոսը, զգուշանալով աննպաստ ազդեցությունից, Մխիթար սարկավագի ձեռքից վերցնում է գիրքը: Կարնում հայտնվել էին լատին քարոզիչներ, որոնք փորձում էին տեղացիներին լատինադավան դարձնել: Ստեփանոս Սեբաստացի անունով մի ուխտավոր, որը Մխիթարին ծանոթ էր, հրապուրում է նրան՝ հայկական սրբավայրերում լինելու ծրագրով: Ընդամենը երկու ամիս մնալով Մայր Աթոռում՝ նա իր ծանոթի հետ մեկնում է Խորվիրապ, իսկ այնուհետեւ՝ Սեւանա կղզու վանքը: Սեւանա կղզում տեղի է ունենում Մխիթարի տեսիլքը, որի վկան, իհարկե, միայն ինքն է: Տեսիլքում Աստվածածինը խոսում է Մխիթարի հետ եւ առաջարկում խնդրանքով իրեն դիմել: Նա էլ պատասխանում է, թե ուզում է այն, ինչ Աստվածածինն ինքն է ուզում, եւ Տիրամայրը խոստանում դա կատարել: Մխիթարյաններն այդ տեսլիքի մեջ կամենում են տեսնել իրենց միաբանության հիմնադրումը եւ վերջինիս հռոմեադավան ուղղությունը: Իհարկե նման կարծիքը զավեշտական է: Հետո Մխիթարն իր ծանոթի հետ որոշում է Սեբաստիա գնալ, սակայն մնում է Բասենի վանքի եպիսկոպոս Մելքիսեդի մոտ՝ ուսուցչություն անելու: Կարնո Ավետիք եպիսկոպոսն էլ աշխատում է նրան Կարնում պահել:

Կարնո առաջնորդ Ավետիք Եվդոկացին նշանավոր է եղել հայոց պատմության մեջ: Ծնվել է Եվդոկիայում 1657 թվի ապրիլի 7-ին, մինչեւ 15 տարեկանը սովորել է պապի՝ հարյուրամյա Սարգիս քահանայի եւ իրեն մկրտող Պետրոս քահանայի մոտ: Հոր մոտ եղել է ջուլհակ եւ սովորել ղումաշ գործել: Հակոբ Բելենկցի եպիսկոպոսի նվիրակության առիթով դառնում է նրա աշակերտը եւ 3 տարի անց՝ 1675-ին, Պայասում ձեռնադրվում սարկավագ: 1689-ին նա գտնվում էր Սեբաստիայում՝ Հակոբ կաթողիկոսի՝ այնտեղ եղած ժամանակ: Միանալով կաթողիկոսին՝ Բելենկցին գալիս է Կոստանդնուպոլիս, իսկ Ավետիքը, նրանից բաժանվելով, երուսաղեմացի Սահակ եպիսկոպոսի հետ գալիս է Էջմիածին: Հետո նրա հետ գալիս է Երզնկայի Կապոսու կամ Կայիփոսի Սբ Հակոբ վանքը, որտեղ ձեռնադրվում է աբեղա եւ հետո՝ վարդապետ՝ նշանակվելով նույն վանքի առաջնորդ: Այստեղից էլ ծագում է նրա Երզնկացի մականունը: Նա նորոգում է ոչ միայն այդ, այլեւ Տիրանաշեն Սբ Նշանի կամ Տիրաշեն Սբ Ներսեսի վանքը, Երզնկայի Մարիամ Աստվածածին խոնարհված եկեղեցին: Այդ շրջանում ծավալվում է ենիչերիների ապստամբությունը, որի ժամանակ վիրավորվում է Ավետիքը եւ 40 օր անկողին ընկնում: Առողջանալուց հետո գալիս է Կ. Պոլիս եւ



արքունական հրամանով զինվորական գունդ բերելով՝ ճնշում է արտամբությունը: Նրա հակառակորդները նրան մեղադրում են, թե առանց թույլտվության եկեղեցի է նորոգել: Կարնո փաշայի հրամանով նա բանտարկվում է, դրվում կոճղի մեջ եւ այդպես թողնվում 3 օր: Դատարանում նա իր արդարացման համար պաշտոնագրեր է ներկայացնում եւ Ֆեյզուլլահ դատավորի վճռով ազատ արձակվում: Այնուհետեւ գալիս է Երզնկա եւ շարունակում վերանորոգումը: Այդ ժամանակ Երզնկայում գտնվող Գյումուշխանացի վարդապետից ծայրագույն գավազան է ընդունում եւ անցնելով Էջմիածին՝ 1691 թվին Եղիազար կաթողիկոսի ձեռամբ ձեռնադրվում եպիսկոպոս՝ 35 տարեկան հասակում: Երբ վերադառնում է Երզնկա, նրա կյանքին սպառնում են, եւ նա պահվում է տանը՝ շարունակ գտնվելով վախի մեջ: Նրա կատաղի հակառակորդ դատավորը հանկարծ ընտանիքի հետ հիվանդանում է եւ դա համարելով աստվածային պատիժ՝ նրան թույլ է տալիս եկեղեցին շինել եւ անգամ դրամական եւ նյութական օժանդակություն ցույց տալիս: Սակայն ենիչերիները կրկին ըմբոստանում են, եւ Ավետիքն ապավինում է Էջմիածնին եւ չորս ամիս անց՝ 1691 թվի վերջերին, Նահապետ կաթողիկոսի հրամանով նշանակվում Կարնո առաջնորդ: Հենց այդ ժամանակ էլ Մխիթար Սեբաստացին հաստատվում է Բասենի վանքում, եւ Ավետիքը կամենում է նրան որսալ, ինչը ցույց տալիս, որ այդ ժամանակ Մխիթար Սեբաստացին դեռ հայադավան էր:

Մխիթար Սեբաստացին Բասենի վանքում մնում է ընդամենը մեկ տարի: 1693-ին վերադառնում է Սեբաստիայի Սբ Նշան վանքը եւ մնում այնտեղ, մինչեւ իր պաշտպան Անանիա եպիսկոպոսին փոխարինում է Սահակ Կեսարացի վարդապետը: Դրանից դժգոհ Մխիթարը 1695 թվին Հովնան Եվդոկացի վարդապետի հետ մեկնում է Երուսաղեմ՝ հայոց վանք գնալու համար: Սակայն Բերիայում կամ Հալեպում նրանք հանդիպում նե լատին աբեղաների, որոնցից Անտոն Պովլիեն, որը ճիզվիտ էր, նրանց գրավում է Հռոմ ուղարկելու եւ գիտնական դարձնելու իր խոստումներով: Դրանով նա նրանց տրամադրում է դեպի հռոմեադավանությունը: Ճիշտ է, նա դեռեւս Հայոց Եկեղեցու սպասավոր էր, սակայն դրանով դրվում է նրա՝ հռոմեադավանության անցնելու սկիզբը: Նա դեռ լատինասեր հայ էր, բայց ոչ՝ կաթոլիկ: Հռոմի անունով գրավված Մխիթարը մոռանում է Երուսաղեմը եւ մեկնում Իսքենդերուն, որը հին Ալեքսանդրիան է: Այստեղից նա անցնում է Կիպրոս եւ նավ նստում՝ Եվրոպա ուղեւորվելու համար: Սակայն միտքը փոխում է, դուրս է գալիս նավից եւ Սելեւկիայի, Անտիոքի, Հալեպի ու Այնթապի վրայով մեկնում Սեբաստիա՝ 1695 թ. նոյեմբերին: Կրկին հաստատվում է Սբ Նշան վանքում: Այստեղ 1696 թվի ապրիլի 12-ին քահանա է ձեռնադրվում՝ Սահակ Կեսարացի եպիսկոպոսի ձեռամբ: Նա հանդգնում է լատինասեր խմբավորման կողմը բռնել՝ առաջ բերելով իր դեմ դիմադրություն: Ստիպված մեկնում է Եվդոկիա եւ Ակն, հետո կրկին վերադառնում Սեբաստիա՝ լսելով, որ իր հակառակորդ Ծառուկ վարդապետը մահացել է: Այժմ նա հայացքը հառում է հայոց պատրիարքության կենտրոն Կոստանդնուպոլսին եւ 1698 թ. ապրիլին ժամանում օսմանյան մայրաքաղաք, երբ ընդամենը 22 տարեկան նորընծա վարդապետ էր:

*Շարունակությունը՝ էջ 4*

# ՈՒՇԱՑԱԾ ՊԱՏԱՍԽԱՆ ՕՏԱՐ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԻՆ՝ Ս. ԿԱՏԱՐԻՆԵԻ ԿՈՒՅՍԵՐԻ ՄԱՍԻՆ



Հայ Առաքելական Եկեղեցու սակավաթիվ կանանց մենաստանների շարքում Նոր Ջուղայի Ս. Կատարինե կուսանաց վանքը, թերեւս, ամենաերկարակյացն է, որը գոյատեւել է ավելի քան 3 դար: Այն հիմնվել է 1623 թվականին՝ հռչակավոր Լազարյանների տոհմի նահապետ խոջա Եղիազարի բարերարությամբ եւ գործել է մինչեւ 20-րդ դարի կեսերը: Ավանդության համաձայն՝ կուսանաց վանքի առաջին կույսերը Հին Ջուղայից այստեղ գաղթած երեք կույսերն էին՝ Ուռուփսանա, Թագուհի եւ Հռիփսիմե անուններով:

«Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ» հատորում զետեղված է մի հիշատակարան, որը ամենահին ու արժեքավոր աղբյուրներից է Ս. Կատարինե կուսանաց անապատի միանձնուհիների մասին: Նոր Ջուղայում 1660 թվականին գրված ձեռագիր հիշատակարանում թվարկված են Ս. Կատարինեի միանձնուհիների անունները, որոնց թվում քիչ չեն նաեւ սարկավագուհիները: «Դարձեալ յիշեցէք զմիաբան սբ. ուխտիս, որ են ժողովեալ զսրբասնեալ կուսանքս եւ որ ի սմա են եկամուտ, զսարկաւագուհիքն՝ զՍառեն եւ Տրիսիէն, զՍանդուխտն եւ փոքր Սառէն, զԳայիանէն, Յուղիտէն, Մարինոսն, Թագուհին, Հռիփսիմէն, Եղիսաբեթն, Դշխոյին, Վարվառն: Զմահդասիքն՝ միւս Ուղիտէն, զմայրապետ Թանկիկն, Մարամն եւ Անային, Իշխանն, զՆունին եւ զմիւս Անային: Եւ սպասաւորք եկեղեցւոյն՝ Հռուփսանէն, Շուշանն, Մարթէն, Եպրաքսէն, զՆաՍուփիէն, զմիւս Վարվառն, զՆաճանն, միւս Թագուհին, միւս Հռիփսիմէն, Թալիթէն, դռնապան Մարգրիտն, բազմաշխատ Պողոսն, եւ հանգուցեալ միաբանք սոցին....

Յիշեցէք սբ. եկեղեցոյս զսպասաւոր Թեկղիէն, Եղինարն, Մարամն, Մամարն, յիշեցէք...»:

1700-ականների սկզբին այս կուսանոցում միանձնուհիների թիվը հասնում էր շուրջ 33-ի: Հենց այս թվով խցեր կային վանքի տարածքում՝ նեղ ու անձուկ, հազիվ մեկ մարդաբոյ: Հետագայում կույսերի թիվը գնալով նվազում է, եւ 19-րդ դարի կեսերին կուսանոցի միաբանության անդամների թիվը չէր հասնում 20-ի: Կուսանոցն իր պատմության էջը վերջնականապես փակում է 1954 թվականին, երբ կյանքին հրաժեշտ է տալիս կուսանոցի վերջին կույսը՝ Եղիսաբեթ Իսրայելյանը՝ ձեռնադրված 1937 թվականին Թավրիզում՝ Ներսես արք. Մելիք-Թանգյանի կողմից:

Հնամյա կուսանոցի պատմության ու առօրյայի մասին հետաքրքիր տեղեկություններ է մեզ փոխանցում նաեւ նորջուղայեցի Հարություն Տեր-Հովհանյանցը՝ մենաստանի հիմնադրումից մինչեւ իր ապրած ժամանակները՝ 1800-ականների կեսերը:

Մենաստանի խստակրոն կույսերն ապրում էին աղոթական կյանքով, իսկ ազատ ժամանակը նվիրում էին ձեռագործին: Առաջին կոչնակի կանչով, որ հնչում էր գիշերային ժամին, միանձնուհիները զույգ-զույգ խմբվում էին եկեղեցու սբ Սեղանի առջեւ եւ սաղմոսերգությամբ սկսում օրվա ժամերգությունը, որ շարունակվում էր մինչեւ արեւածագ: Ցերեկային ժամերը նույնպես անցնում էին աղոթքով ու սաղմոսների ընթերցանությամբ՝ մինչ երեկոյան կոչնակը կրկին կիրավիրեր երեկոյան ժամերգության:

Միաբաններից յուրաքանչյուրն ուներ 1-2, երբեմն էլ ավելի դեռատի աշակերտուհիներ, որոնց ուսուցանում էին եկեղեցական սաղմոսներ եւ պատրաստում նրանց կուսակրոնության՝ այսպես ապահովելով միաբանության հաջորդականությունը: Աղջիկները, սակայն, սրբակեցության ուխտն ընդունում էին 20 տարեկանից հետո միայն, որպեսզի որեւէ մեկն այլեւս չզղջար իր որոշման համար: Ձեռնադրվելով թեմակալ առաջնորդի կողմից՝ նորընծաներն ստանում էին եկեղեցական ստորին աստիճանները եւ «խարանազգեստ եղեալ»՝ համալրում միաբանության շարքերը: Սարկավագուհիները, որոնց ձեռնադրության կարգը կուսանոցում վերականգնվել էր 1851 թվականին՝ թեմակալ առաջնորդ Թադեոս արք. Բեկնազարյանի կողմից, պատարագիչ քահանայի հետ մասնակցում էին սբ Պատարագի արարողությանը՝ Ավետարան կարդալով, Վերաբերում կատարելով, քշոց անելով ու երգելով:



Կուսանոցը ղեկավարում էր մայրապետը, ինչպես ժամանակագիրն է վկայում, հավասարության սկզբունքով ու առանց խտրական որոշումների:

Կուսանաց անապատի միջոցները գոյանում էին նվիրատվություններից, վանքին կտակված դրամագլուխների տոկոսներից, կալվածներից ստացված եկամուտներից: Վանքին առատաձեռն նվիրատվություններ էին կատարում հատկապես Ջուղայից Հնդկաստան գաղթած մեծահարուստ հայերը:

*Շարունակությունը՝ էջ 5*

# ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ
## (1897-1937)



*Սկիզբը՝ թիվ 15*

**ՀԱՅՐԵՆԻՔԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ:** Մարդկային ապրումների անսահման աշխարհում՝ սիրո, կարոտի, երազանքների ու կյանքի իմաստի որոնման բարդ հանգույցներում, Չարենցն սկզբից եւեթ հաստատեց իր անմնացորդ նվիրումը հայրենիքին: Ազգային ցավի ողբերգությունն ու վերածնության հույսը դարձան նրա ապրումների առանցքը, նրա ինքնարտահայտման ու ինքնաճանաչման հիմքը:

*«Կապուտաչյա հայրենիք»* (1915) անավարտ պոեմը 18-ամյա բանաստեղծի հարազատության հավաստումն էր հայրենիքին եւ հայրենիքի հանդեպ տածած իր զգացմունքների քնարական վերապրումը: Օգտագործելով դիմառնության ձեւը՝ Չարենցը մարդկայնորեն անձնավորում է հայրենիքը՝ դիմելով նրան *«Օ՛, հեռավոր, կապուտաչյա սիրուհիս… Օ՛, հեռու իմ քույր…»* արտահայտություններով:

Զգացմունքի անմիջական տարերքը շատ շուտով բախվում է իրականությանը: Կամավորական զորքերի հետ հայրենիքի փրկության հույսով հասնելով մինչեւ Վան՝ բանաստեղծը տեսնում է իրական հայրենիքի վիճակը եւ տեսածի ու զգացածի անմիջական տպավորությամբ 1915-1916 թթ. գրում եւ առանձին գրքով հրատարակում է **«Դանթեական առասպել»** պոեմը: Պատումը Չարենցն սկսում է սովորական, առօրյա ոճով: Սակայն դժոխային պատկերների նկարագրությունից հետո աստիճանաբար հասնում է մահվան տեսիլի: Բանաստեղծը վերարտադրում է համազգային ողբերգությունը եւ դա ներկայացնում երբեմն լուսանկարչական ճշգրտության հասցված պատկերներով: Ինքն ականատես էր Մեռյալ Քաղաքի՝ Վանի ողբերգությանը: Հոգեբանական լարվածությունը հատկապես ակնառու է պոեմի հինգերորդ գլխում, որտեղ նկարագրությունը, քնարական ապրումը, զգացմունքային բռնկումն ու զեղումը հասնում են ծայրահեղ շիկացման եւ բառացիորեն դառնում մահվան տեսիլ ու զառանցանք.

*Եվ մենք այդ գիշեր մնացինք այդտեղ՝*
*Մեռած Քաղաքի ավեր շենքերում:*
*Ամբոխվել էին տեսիլներն ահեղ*
*Խեղերի նման ցատկում ու պարում,*
*Ու դառնում էին մեռելներ մի տեղ՝*
*Սատանայական տենդոտ շուրջպարում:*
*Մեռած Քաղաքի շենքերից մեկում,*
*Աչքերս անլույս խավարին հառած,*
*Պառկել էի ես - ահավոր, անքուն:*
*Ու դեմս, կարմիր կրակներ վառած,*
*Ցատկոտում էին, բառաչում, տնքում*
*Մեռելներ զվարթ ու բազմատարազ:*

Ահա ազգային այս սահմռկեցուցիչ ողբերգության մեջ էր ձեւավորվում պատանի հանճարի հոգեբանությունը: Բայց եւ, անգամ դժոխքի այդ պարունակներից, նա ազգին հոգեպես փրկելու ուղիներ է որոնում, որովհետեւ, հակառակ դեպքում, ամեն ինչ կդատապարտվեր վերջնական կործանման.

*Ու պետք է քայլե՛լ ու քայլե՛լ համառ՝*
*Ապրելու հսկա տենչը բեռ արած,-*
*Քայլել անիմաստ մի կյանքի համար,*
*Մարել - ու վառել աստղերը մարած,*
*Որ - տիեզերքի զառանցանքը մառ*
*Չցնդի՛ երբեք ու մնա - երազ…*

Ազգային կեցության ուղիների որոնման ճանապարհին Չարենցը գրում է նաեւ **«Վահագն»** (1916) երկը, որը, չնայած իր փոքր ծավալին (16 տող), զետեղել է պոեմների մեջ: Ազգային կյանքի պատկերը ճիշտ արժեքներով տեսնելու եւ գնահատելու զգացողությամբ բանաստեղծը ներքին զայրույթով բռնկվում է բոլոր այն սին խոստումների ու թերացումների դեմ, որ նախկինում կատարվել էին հայրենիքի գաղափարախոսության հարցում: Ազգային ողբերգության մղձավանջը տեսած բանաստեղծը, խաբված որդու նման, ընդվզում է բոլոր նրանց դեմ, ովքեր իրական Հայաստանի փոխարեն առասպելական Հայաստան էին տեսնում եւ իրական ուժերի փոխարեն պանծացնում առասպելական հերոսներին: Սակայն նախնիներն էլ մեղք չունեին. ազգային ոգու հարությունը հիմքեր էր որոնում, որոնցից մեկն էլ անցյալի փառքն էր, ինչը, սակայն, մնաց որպես ռոմանտիկական մի մտահայեցում՝ ամենեւին սատար չլինելով իրական Հայաստանի իրական վիճակին: «Վահագնը» հենց այդպես խաբված որդու դիմադարձ ընդվզումն է նախորդների դեմ, ովքեր անցյալ ժամանակների պատմություններով թմրեցրել էին միտքը, իսկ արդյունքը երբեւէ չեղած ամոթալի ծանր պարտությունն էր ու պատմական հայրենիքի կորուստը.

*Հրդեհի աստված. հրդեհ ու կրակ,*
*Օ, Վահագն արի:- Տեսնում եմ ահա,*
*Որ ծիծաղում ու քրքջում են նրանք*
*Արնաքամ ընկած դիակիդ վրա:*
*Թե մի՞ֆ էիր դու… Եկան երգեցին*
*Մի հին իրիկուն գուսանները ծեր,*
*Որ հզո՛ր ես դու, հրոտ, հրածին,*
*Որ դո՛ւ կբերես փրկությունը մեր:*
*Եվ հավատացինք, հարբած ու գինով,*
*Որ դու կաս՝ հզոր, մարմնացում Ուժի -*
*Իսկ նրանք եկան՝ արյունով, հրով*
*Մեր երկիրը հին դարձրին փոշի…*
*Եվ երբ քարշ տվին դիակդ արնաքամ,*
*Որ նետեն քաղցած ոհմակներին կեր -*
*Մեր կյանքի հիմերն անդունդը ընկան*
*Եվ արնոտ միգում ճարճատում են դեռ…*

«Փրկության արեւ Վահագնիդ տեսար» տողի մտայնության ժխտմամբ՝ Չարենցի «Վահագնը», հակադրվելով Հովհաննես Հովհաննիսյանի «Վահագնի ծնունդը» բանաստեղծությանը, միաժամանակ անկասելի բողոքի ձայն էր ընդհանրապես հայրենասիրության այս բնույթի ըմբռնումների դեմ: Չարենցն իրական կյանքով ապրող հայրենիք էր երազում եւ ջանում մաքրել 19-րդ դարի պատմական դրամաներից, պոեմներից ու վեպերից պահպանված եւ 20-րդ դար հասած ռոմանտիկական պատրանքները: Այս առումով «Վահագնը» շրջադարձային ստեղծագործություն է:

Համատարած անհուսության եւ անելանելիության արտահայտություն են «Հատված» վերնագրված պոեմը, «Ողջակիզվող կրակ» շարքի մի քանի գործեր:

*«Հատվածը»* անորոշության դատապարտված հայրենասերի տառապագին ու հոգետանջ մի ինքնաբացահայտում է՝ անչափ բնորոշ 1918 թ. ազգային կյանքին, երբ արդեն վերջնականապես դատարկվել էր ոչ միայն Արեւմտյան Հայաստանը, այլեւ նույն աղետն էր սպասվում նաեւ Արեւելյան Հայաստանին. *«Մենք, լուռ, շվարե՛լ ենք, // Լույսերս // Մարել ենք - // Հույսերս են ո՞ւմ ենք տվել… // Եվ ո՞վ մեզ, // Էլ ո՞վ մեզ, // Էն ո՞վ պիտի տա - // Երկի՛ր իմ, թռիչք ու թեւեր…»:*

*Շարունակությունը՝ էջ 6*

## ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Չարենցի ստեղծագործական ուղին տեւել է 25 տարի: Առաջին բանաստեղծությունը լույս է տեսել 1912-ին, վերջինները գրվել են 1937-ին: Քառորդ դարը երկար ճանապարհ չէ, բայց, հաշվի առնելով գրողի գաղափարագեղագիտական զարգացման առանձնահատկությունները, կարելի է բաժանել փուլերի: Չարենցի մեջ, մեկը մյուսին շարունակելով ու ամբողջացնելով, երբեմն նաեւ հերքելով, ասես ապրում էին մի քանի ստեղծագործող՝ հայրենիքի ողբերգության ու մարդու ողբերգության բանաստեղծը, խորհրդավոր երազանքների ճամփորդը (1912-1917), կյանքի վերափոխման պայքարի մունետիկն ու իր ժողովրդի փորձության ժամի ողջակեզը (1918-1921), նոր արվեստի պատգամախոսն ու նոր օրերի երգիչը (1922-1924), ժամանակի վիպական պատմության տարեգիրը (1925-1930), պատմության երթի ու ժողովրդի բախտի փիլիսոփան (1931-1934), ողբերգական մաքառումի ու սխրանքի ճշմարտախոս վկան (1935-1937): Չարենցի պես ստեղծագործ անհատը պատմության առջեւ կանգնում է ժամանակի ամբողջ ընդգրկումով: Իսկ ժամանակը նրա համար ե՛ւ իր կյանքի ժամանակն էր, ե՛ւ պատմության ժամանակը: Այդ լայնությամբ էլ նա ի մի է բերում հայ եւ համաշխարհային գեղարվեստական զարգացման հարուստ փորձը:

---

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՆԱՀԱՊԵՏ Ա ԵՂԵՍԱՑԻ
## (1691-1705)

*Սկիզբը՝ էջ 3*

Այդ միջոցին մի դժբախտ իրադարձություն պատահեց: 1696-ին Սսի կաթողիկոս Ղասիտեցին խլամացավ՝ կախաղանի սպառնալիքի ներքո: Ինչպես իրավացիորեն նշում է Մ. Օրմանյանը, վերջինս իրականում մահմեդացավ 1707-ին:

1694-ից Պոլսի պատրիարքն էր Եփրեմ Ղափանցին, որը հայադավանության համարձակ ջատագով էր: Մխիթարի՝ Կ. Պոլիս հասնելուց մեկ ամիս առաջ՝ 1698 թ. մայիսի 6-ին, Եփրեմը պաշտոնանկ եղավ: Ըստ Մ. Օրմանյանի՝ պաշտոնանկությունը եղավ մայիսի 7-ին: Նրան հաջորդեց Մելքիսեդեկ եպիսկոպոսը՝ հայտնի Սուպհի Շայիր մականունով, ինչը ցույց է տալիս նրա շայիր կամ աշուղ լինելը: Սրա օրոք էլ շարունակվում էին Կ. Պոլսում հայադավանների եւ կաթոլիկների անվերջանալի վեճերը: Խտրականությունները դեռեւս շատ խորացած չէին: Օրինակ՝ հռոմեական դպրանոցում ուսում առած աբեղաները դառնում էին Հայոց եկեղեցու վարդապետներ: Ինչպես՝ Խաչատուր Կարնեցին կամ Առաքելյանը, որը լինելով պրոպագանդայի դպրոցի աշակերտ՝ քարոզչություն էր անում Սամաթիայի Սբ Գեւորգ եկեղեցում եւ անգամ բարձրանում էր Մայր եկեղեցու բեմը:



Մխիթարը Կ. Պոլսում հարում էր Խաչատուրին եւ մտմտում Հռոմ գնալու գաղափարը: Մելքիսեդեկ պատրիարքն էլ Ղալաթիայի Սբ Լուսավորիչ եկեղեցում քարոզելու իրավունք է տալիս: Ղալաթիայում Մխիթարն սկսում է ազատ շփումներ ունենալ լատինների հետ, ինչը նրան կամաց-կամաց հռոմեադավանության է տանում: Այդ հարցում նրան քաջալերում էին Խաչատուր Կարնեցին եւ ճիզվիտ Հովհաննես Վերզոն: Վերջինս նրան ծանոթ էր դեռեւս Բերիայից: Հանդես գալով խտրականության դեմ՝ նա հայադավանների եւ հռոմեադավանների միջեւ խաղաղության եւ եղբայրության մասին քարոզներ էր կարդում: Նույնիսկ հայադավանության ջատագովները Մխիթարին ասում էին, որ իրենք նրա հետ խնդիր չունեն:

Մխիթարը Կ. Պոլսում մնում է ընդամենը 5 ամիս: 1698 թվի սեպտեմբերին նա որոշում է գնալ Հայաստանի ներքին գավառները, որտեղ նա ավելի վաղ տեսել էր շարժման միտումներ եւ ինչ-ինչ նշաններ:

*Շարունակելի*

***Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***
***ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,***
***պրոֆեսոր***

---

# ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՉՈՐՍ ՍԱՆԵՐ ԱՎԱՐՏԵՑԻՆ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԲՈՒՀԵՐԸ



Չորս հայ երիտասարդներ, ովքեր սովորում էին Հնդկաստանի լավագույն բարձրագույն ուսումնական հաստատություններում, 2011 թվականին ավարտեցին դրանք:

Վերջիններս իրենց միջնակարգ կրթությունն ստացել են Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հովանու ներքո գործող Հայոց մարդասիրական ճեմարանում: Այն հաջողությամբ ավարտելուց հետո նրանք, Եկեղեցու հովանավորությամբ, բարձր առաջադիմությամբ ավագ դպրոցի իրենց կրթությունը շարունակել են Կալկաթայում:

Վահե Շիրինյանը (Վաղարշապատ, Հայաստան) ավարտեց Մումբայի «Ծրագրավորում եւ կառավարում» ինստիտուտի ֆինանսներ եւ մարկետինգ ֆակուլտետը, Տաթեւիկ Թադեւոսյանը (Երեւան, Հայաստան) ավարտեց Կալկաթայի «Լորետո» բարձրագույն ուսումնական հաստատության քաղաքագիտության ֆակուլտետը, Արթուր Մարուսեիչը (Վանաձոր, Հայաստան)՝ Էդինբուրգի «Նապիեր» համալսարանի Կալկաթայի մասնաճյուղի հյուրանոցային կառավարման ֆակուլտետը, Ջեսիկա Միլնը (Կալկաթա, Հնդկաստան)՝ «Լորետո» բարձրագույն ուսումնական հաստատության մանկավարժության ֆակուլտետը:

# ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ Է
## Մայր Աթոռ Սբ Էջմիածնում (2011 թ.)

## Սուրբ Ներսես Շնորհալի
# ՆԱՄԱԿԱՆԻ

**Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցություններ:**
**Գրաբարից թարգմանեց եւ ծանոթագրեց Սեդա Ստամբոլցյանը:**
**Հրատարակվել է Սարգիս Պետոյանի մեկենասությամբ:**
***(հատված գրքից (էջ 285-293)***

**29. Տեր Ներսես կաթողիկոսի գրած միաբանական խոսքը մարմնով պատուհասվածներին, ովքեր նախատվել էին որոշ ամբարիշտներից եւ նամակով հայտնել նրան [այդ մասին]**

Ստացա Եդեսիայում ապրողներիդ՝ մարմնով ախտացածներիդ եւ ուրուկ կոչվածներիդ թախծալից գրությունը եւ արտասուքով լցվեցինք մարմնով զանազան հարվածներ ստացածներիդ համար: Սա Աստծո անքննելի դատաստաններից է, Նրա, Ով չափով ու կշռով է օգտակարը բաժանում յուրաքանչյուրին, թեպետեւ մարդիկ չեն հասկանում առողջության ու հիվանդության, մեծության ու փոքրության, հարստության ու աղքատության [նշանակությունը]: Այդպես նաեւ ձեր տկարությունն ու մարմնի անբուժելի ցավերը ուրիշ տեղից չեն, քան Աստծո հրամանից ու կամքից: Իսկ նրանք, ովքեր խռովեցնում ու զզվեցնում են ձեզ անհիուսության խոսքերով եւ վերքի վրա վերք ու ցավի վրա ցավ ավելացնում, ինչպես հայտնի դարձավ ձեր գրածներից, անտեղյակ են Բարձրյալի արդարությանը եւ պատժի արժանի մեղք են գործում, թեպետ չեն հասկանում, որ սատանան է, որ այդպիսիներին շարժում է ձեզ վրա, ինչպես Հոբի բարեկամներին, որպեսզի ոչ միայն մարմնով, այլեւ մտքով տանջի ձեզ՝ ձեզ սպասող մեծ հույսի մխիթարություններից զրկելով ձեզ: Այդպես նաեւ Հոբը ոչ այնքան իր որդիների եւ ունեցվածքի կորուստից եւ մարմնի վերքերից էր խոցվում հոգով, որքան զայրացնող խոսքերից՝ բարեկամների ու կնոջ, որոնց սատանան մղում էր վիճելու նրա հետ, ուստի [Հոբն] ասում էր նրանց. «Դուք մեղանչական բժիշկներ եք եւ ամենքդ՝ չարիքների ողջացուցիչ. թող համրանա՛ք, եւ դա թող համարվի արդարություն [ձեզ համար]» (Հոբ ԺԳ 4-5): Եվ որ ընդդեմ Աստծո կամքի էին խոսում Հոբի բարեկամները նրա հետ, երեւում է նրանից, որ փորձությունների վերջում Աստված ասաց նրանց. «Եթե Իմ ծառա Հոբը ձեզ համար աղոթք չաներ, Ես ձեզ սատակեցնելու էի նրա մասին անիրավությամբ խոսելու համար» (հմմտ. Հոբ ԽԲ 7-8): Քանզի սատանան սովորություն ունի, որ երբ ուրիշ հնարներով չի կարողանում խախտել առաքինի հոգին Աստծո հանդեպ ճշմարիտ հույսից, թերահավատ ու [Սուրբ] Գրքի իմաստությունից զուրկ որոշ մարդկանց է գտնում եւ նրանց սրտերի չար գանձերից անհիուսության խոսքեր ասում ձեզ եւ ձեզ նմաններին, որ մարմնի նեղություն են կրում, որպեսզի հուսահատվելով վտանգվեք նեղությունների մեջ եւ տրտնջաք Աստծուց՝ անմասն մնալով վարձատրությունից: Մինչ աստվածային օրենքը մարմնով առողջ ամեն մարդուց պահանջում է ձեռնտու լինել տկարներին եւ ոչ թե հակառակը [գործել]. հարուստներից՝ որ իրենց ունեցվածքով հոգան նրանց կարիքները, իսկ աղքատներից՝ որ վշտացածներին այցելեն՝ ըստ Քրիստոսի հրամանի, եւ բարի խոսքով մխիթարեն, վշտակցեն ու արտասվեն, երբ ձեռնհաս չեն ուրիշ ձեւով օգնելու նրանց, եւ ովքեր սա անում են, մասնակից են դառնում աղքատներին [հասանելիք] երանությանը: Իսկ ովքեր ողորմություն գործելու փոխարեն արհամարհում ու նախատում են նրանց, այդ նախատինքը Քրիստոսին է հասցեագրվում, եւ ինչպես որ ողորմությունը, որ մեկը գործում է աղքատների հանդեպ, Քրիստոսն Իրենն է համարում, այդպես էլ նրանց հանդեպ արհամարհանքը, նախատալից խոսքերն ու բոլոր տրտմությունները, որ մեկը հասցնում է նեղվածներին ու տառապյալներին, Քրիստոսն Իրենն է համարում, ինչպես եւ ասաց ձախակողմյաններին. «Քաղցեցի, եւ չկերակրեցիք Ինձ» եւ մնացած բոլորը, եւ երբ նրանք ասացին. «Տե՛ր, ե՞րբ Քեզ քաղցած, ծարավ կամ մերկ տեսանք եւ չծառայեցինք Քեզ», ասաց նրանց. «Քանի որ չարեցիք այս փոքրիկներից մեկի համար, նաեւ Ինձ համար չարեցիք» (հմմտ. Մատթ. ԻԵ 42-45): Երբ Քրիստոսը երեւաց Պողոսին, մինչ վերջինս դեռ հրեության հետեւորդ էր, եւ երկնքից ձայնեց նրան. «Սավո՛ւղ, Սավո՛ւղ, ինչո՞ւ ես հալածում Ինձ» (Գործք Թ 4), Պողոսը չէր կարող հալածել բարձունքներում Իր Հոր աջ կողմում նստած Քրիստոսին, այլ [Քրիստոսն] Իր հավատացյալների հալածանքներն Իրենը համարելո՛վ դա ասաց:

Արդ՝ ինչպես որ Իր վկաների բանտարկությունը, չարչարանքն ու արյան հեղումն Իրենը համարելով՝ Քրիստոսը վրեժ է առնելու անհավատներից, երբ Իր Հոր փառքով գա դատելու աշխարհը, այդպես էլ ով Նրա աղքատների ու վշտահարների կրած նեղություններին է՛լ ավելի մեծ նեղություններ է ավելացնում նախատալից խոսքերով կամ մեկ այլ անիրավությամբ, փոխարեն նրանց մխիթարելու եւ ցավակից լինելու, արդար դատաստանին նրանից վրեժ կառնվի որպես Քրիստոսի հրամանի հակառակորդից: Իսկ նրանց, ովքեր հանուն Քրիստոսի նեղություն կրողների, աղքատների ու հիվանդների մասին հոգ կտանեն եւ կարիքավորներին անհրաժեշտ պարագաներով ողորմություն կտան ու կօգնեն ըստ իրենց կարողության՝ կա՛մ կերակրելով, կա՛մ մերկությունը ծածկելով, կա՛մ քաղցր խոսքերով մխիթարելով վշտի մեջ, կա՛մ ողորմություն տալու միջոցով ազատելով ծառայությունից, այդպիսիներին Իր երկրորդ գալստյանը Քրիստոսն առաջ կկանչի եւ ամբողջ աշխարհի ներկայությամբ շնորհակալ կլինի՝ ասելով. «Սրանք արեցին ավելին, քան Ես պատվիրել էի, որովհետեւ ոչ միայն Ինձ տեսակցելու եկան, երբ հիվանդ էի եւ բանտում, այլեւ ողորմություն տալով ազատեցին Ինձ բանտի կապանքներից, դեղերով ու տարատեսակ ծառայություններով ձեռք մեկնեցին Ինձ, երբ հիվանդ էի, Իմ քաղցն ու ծարավը ո՛չ մեկ, այլ շատ անգամ հագեցրին եւ իրենց զգեստներով ծածկելով Իմ մերկությունը՝ պատսպարեցին Ինձ տոթից ու սառնամանիքից: Ուստի այդ մարմնական կապանքներից Ինձ ազատելու դիմաց սրանք կազատվեն իրենց մեղքերի կապանքներից: Այն ապականացու կերակրի ու ըմպելիքի դիմաց, որոնցով Ինձ կերակրեցին ու խմեցրին, երբ քաղցած ու ծարավ էի, նրանց կտամ անապական կերակուրն ու անմահարար կենդանի ջուրը, որոնց շնորհիվ այլեւս երբեք քաղց ու ծարավ չեն զգա: Եվ իրենց այն դյուրապառ զգեստների դիմաց, որոնցով Իմ մերկությունը ծածկեցին, նրանց կհագցնեմ այն առաջին լուսեղեն պատմուճանը, որից մերկացավ նրանց նախահայրը»: Եվ սրանում համոզվում ենք տերունական խոսքից, ինչպես եւ ասացինք. «Ով այս փոքրիկներից մեկին խմեցնի միայն մեկ բաժակ սառը ջուր, չի կորցնի իր վարձը» (Մատթ. Ժ 42): Եթե այս փոքր ողորմության հիշատակը պահվում է Աստծո մոտ, եւ տվողի վարձը չի կորչելու, ի՞նչ ասել մեծերի մասին: Արդ՝ ինչպես որ մարտիրոսները, որ Քրիստոսի հավատքի համար համբերեցին անիրավ մարդկանցից եղած զանազան չարչարանքներին եւ մահվանը, կփառավորվեն ու կպսակվեն Քրիստոսից, երբ հաջորդ անգամ աշխարհ գա, այդպես էլ բոլոր նրանք, որ մարմնի ցավեր ու այս ապականացու բնությանը վրա հասնող նեղություններ են կրում եւ համբերությամբ ու Աստծուց շնորհակալ լինելով տանում են, Քրիստոսի վկաներից ոչ պակաս փառքի կարժանանան, մանավանդ դուք, որ առավել մեծ նեղություն եք կրում, քան մարմնով ուրիշ նեղյալներ:

Աբրահամն իր երիտասարդության սկզբում հաճելի գտնվեց Աստծուն, ինչպես եւ գրված է. «Աբրահամը հավատաց Աստծուն, եւ սա նրա համար արդարություն համարվեց» (Հակ. Բ 23), բայց երբ Աստված փորձեց նրան՝ նրա որդուն որպես ողջակեզ պահանջելով, եւ նա դրանում հաճելի գտնվեց, քանի որ հոժարությամբ մատուցեց, այնուհետեւ լսեց Աստծո կատարյալ օրհնությունը, դարձավ շատ ազգերի հայր եւ երկնքի արքայության հիմք ու ժողովարան: Հոբը նախքան փորձվելը վկայվեց Աստծուց որպես արդար եւ անարատ, իսկ սատանայի փորձություններին համբերությամբ ու Աստծուց գոհանալով հաղթելուց հետո արժանացավ համբերողների հաղթանակի պսակին: Պողոսի երեսի թաշկինակը, որով նա քրտինքն էր սրբում, հիվանդներին ու ախտաժետներին բժշկում էր, բայց նրա սեփական մարմնի տկարությունը, որ ուներ, չբժշկվեց մինչեւ վերջ, քանզի դա Աստծո կամքով էր, ինչպես եւ ինքն է խոստովանում. «Երեք անգամ աղաչեցի Տիրոջը,- ասում է,- որ հեռացնի ինձնից, բայց Տերն ասաց ինձ. «Բավական է քեզ Իմ շնորհը, որովհետեւ Իմ զորությունը տկարությամբ է կատարյալ դառնում» (Բ Կոր. ԺԲ 8-9): Այսպես նաեւ Հին ու Նոր [ուխտերի] բոլո՛ր արդարները փորձություններին հաղթելով հաճելի գտնվեցին Աստծուն:


ՆԱՄԱԿԱՆԻ

*Շարունակությունը՝ էջ 7*

# ՈՒՇԱՑԱԾ ՊԱՏԱՍԽԱՆ ՕՏԱՐ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԻՆ՝
# Ս. ԿԱՏԱՐԻՆԵԻ ԿՈՒՅՍԵՐԻ ՄԱՍԻՆ

*Սկիզբը՝ էջ 3*

1833 թվականից վանքի միջոցները համալրվում էին նաեւ պարսից արքայի տարեկան նվիրատվություններով: Այլ նվիրատուների շարքում ժամանակագիրը հիշատակում է անգամ ռուսաց Նիկոլայ կայսեր անունը:

Գոյացած միջոցները, սակայն, ծախսվում էին ոչ միայն միաբանության կարիքների, այլեւ չքավոր կանանց եւ որբացած աղջիկներին տրվող ողորմությունների նպատակով: Ինչպես վկայում է ժամանակագիրը, հիմնադրման օրվանից ի վեր Սբ Կատարինե վանքում «գովելի հանդիսացեալ է ողջախոհութիւն՝ պարկեշտութիւն եւ սրբասիրութիւն սոյն միաբանութեան, իսկ յաչս այլազգեաց զարմանալի իմն համարի ուխտն կուսութեան սոցա, վասնորոյ եւ պատկառելի է ամենեցուն սոցին միաբանութիւն»:

Հետագայում կուսանոցը հայտնի դարձավ նաեւ օրիորդաց իր դպրոցով, որ հիմնվեց կուսանոցում 1858 թվականին՝ ջավաթբնակ Մանուկ Հորդանանյանի միջոցներով՝ դառնալով աղջիկների համար առաջին դպրոցը Նոր Ջուղայում: Հենց վանքի մայրապետին էին քաղաքի կանայք վստահում իրենց աղջիկներին՝ աստիճանաբար դուրս գալով ուսյալ աղջիկների մասին եղած նախապաշարումներից: Իսկ 20-րդ դարասկզբին արդեն թիֆլիսահայ «Մուրճն» արձանագրում էր. «Նոր Ջուղայի այժմեան բոլոր թէ՛ մեծ եւ թէ՛ փոքր տիկինները եւ օրիորդները, շատ քիչ բացառութեամբ, կարողանում են կարդալ հայերէն եւ գրաբարախառն աշխարհաբարով գրել»:

1900 թվականին աղջիկների դպրոցը տեղափոխվում է վանքից դուրս կառուցված մեկ այլ շենք: Սակայն մեկ տարի անց այստեղ հիմնվում է բարեգործական մի այլ կառույց՝ «Ս. Կատարինյան աղջկանց արհեստանոցը», որտեղ կույսերի հսկողության ներքո 20-25 աղջիկներ զբաղվում են գորգագործությամբ:

Լուսավորությունը վաղուց արդեն մուտք էր գործել Նոր Ջուղա՝ խախտելով նաեւ շատ ավանդույթներ, այդ թվում նաեւ կուսանոցի խստակյաց կյանքը: Կուսանոցի դռներն ավելի հաճախ էին բացվում: Արդյո՞ք այս ամենն էր պատճառը միաբանական կյանքի հետագա թուլացման, որի մտավախությունն էր ունեցել նաեւ ժամանակի թեմակալ առաջնորդը. դժվար է ասել: Սակայն միանշանակ է՝ կուսանոցն այլեւս նախկին կանոններով չէր ապրում:

Ընդամենը մեկ դար առաջ անգլիացի դիվանագետ Ջեյմս Մորիերը, այցելելով կուսանոց, 1918 թվականին հրատարակած իր ուղեգրությունում գրում է. «Կույսերը թվով ինն էին, բոլորը պառավ եւ բոլորն էլ տգեղ՝ բացի երկուսից: Նրանք գլխից մինչեւ ոտք հագնված էին մի կոպիտ մութ կապույտ կտոր, բոբիկ ոտքով, եւ մի կաշյա գոտի իրենց մեջքում, որոնցից կախել էին իրենց բանալիները եւ այլն: Նրանցից եւ ոչ մեկը չէր խոսում պարսկերեն»:

Մեկ այլ անգլիացի դիվանագետ՝ սըր Ուիլիըմ Աուզլեյը, որ նույնպես 18-րդ դարի սկզբին առիթ էր ունեցել այցելելու Ս. Կատարինե կուսանաց վանք, եւս գրել է. «Մեզ թույլատրեցին այցելել պաշտամունքի վայրեր եւ կույսերի վանքը կամ «դստերց եկեղեցին»՝ Քիլիսիահի- Դուխտերան (Kelisin-I Dukhteran), ինչպես պարսիկներն են ասում: Մենք տեսանք նմանապես այդ բարեպաշտ կույսերին, թվով տասնութ հոգի, որոնցից մեկը միայն, իմ կարծիքով, կարելի է ասել, որ չափավոր գեղեցկություն ուներ: Նրանք եւս եռանդուն կերպով հյուրասիրեցին մեզ»:

Կույսերի արտաքին բարեմասնությունների մասին ոչ այնքան դրական կարծիք ունեցող օտարերկրյա ճանապարհորդներն ի՞նչ իմանային, որ կուսանոցում սահմանված խստաբարո կանոնների համաձայն՝ իրենց պիտի ներկայանային միայն ամենածեր կույսերը, ինչպես պահանջում էր կուսանոցի կանոնադրությունը. «Իգալ այլազգի իշխանաց ի տեսանել զԱնապատն միայն Մայրապետն եւ երեք ծերագոյն կուսանք ընկալցին զնա, իսկ դեռահասակ կուսանք մի երբեք երեւեսցին յաչս նոցա»:



Սա էլ ուշացած պատասխան անգլիացի ճանապարհորդներին:

***ՀԵՂԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ***

## ՀՈՎԻՎՆ ՈՒ ԻՐ ՀՈՏԸ

# ԽՈՆԱՐՀՈՒԹՅՈՒՆ

*Ձեր հարցերին պատասխանում է Տաթեւի վանքի վանահայր տեր Միքայել աբեղա Գեւորգյանը: Ձեր անունից հարցերն ուղղում է մեր թերթի արտահաստիքային թղթակից Անժելա Խաչատրյանը:*

**- Հա՛յր սուրբ, եկեղեցու սուրբ հայրերի բնորոշմամբ՝ բոլոր առաքինությունները բախում են Աստծու ողորմության դուռը, բայց միայն խոնարհությունն է բացում այն: Ինչո՞ւ է խոնարհությունը համարվում գլխավորը բոլոր առաքինությունների մեջ, եւ ո՞րն է խոնարհության ճշմարիտ կերպը:**

- Խոնարհությունը համարվում է առաքինությունների գլուխը, քանի որ առանց խոնարհության՝ որեւէ առաքինություն չենք կարող ձեռք բերել: Թեոդորոս Գազացին ասում է, որ առաքինությունը մի տուն է, որի քարերն առաքինություններն են, իսկ շաղախը՝ խոնարհությունը: Եվ տունն ամուր լինել չի կարող՝ առանց շաղախի: Քրիստոսն ասում է Ավետարանում. «Ես որտե՞ղ պիտի բնակվեմ, եթե ոչ նրանց մեջ, ովքեր վախենում եւ դողում են Իմ խոսքերից»... Այստեղ Տերը պատկերում է խոնարհամիտ մարդու կերպարը, քանզի խոնարհամտությունը ներքին հոգեւոր վիճակ է, կենսակերպ, թեեւ ներկայիս իրականության մեջ այն շփոթվում է ստրկամտության, նվաստության հետ: Մինչդեռ այդպես չէ. խոնարհությունը կոչվում է խոնարհամտություն, որովհետեւ մենք, քննելով մեր անձը, խոնարհվում ենք մեր կատարած սխալների համար, հիշում դրանք, նաեւ՝ մեր չգործած բարիքները... Այս կերպ մենք խոնարհվում ենք Տիրոջ առջեւ: Խոնարհամտությունը մեզ տանում է դեպի աստվածճանաչողություն: Իրական խոնարհ մարդկանց մեջ Աստված է բնակվում, որովհետեւ երբ մենք մեղքի դեմ մղվող այս ներքին հոգեւոր պայքարում հաղթանակում ենք՝ խոնարհվելով, Աստված բնակվում է մեր մեջ, Ում զորությամբ էլ հաղթանակում ենք նաեւ արտաքին հարաբերությունների մեջ: Ահա խոնարհության ճշմարիտ կերպը: Խոնարհ մարդու մեջ Աստծու շնորհներն են գործում. այդպիսին առաքինի կենցաղավարություն ունի, նրա հետ երկյուղով ու պատկառանքով են շփվում, որովհետեւ հասկանում են, որ այդպիսի մեկը ոչ միայն իր դիմացինի, այլեւ իր մեջ բնակվող Աստծո հետ է խոսում անդադար: Տերն ասում է. «Ով իր անձը բարձրացնում է, կխոնարհվի. եւ ով խոնարհեցնում է իր անձը, կբարձրանա » (Մատթ. ԻԳ 12), այսինքն՝ խոնարհվելով Աստծու առջեւ՝ բարձրանում ենք մարդկանց առջեւ:

**- Այնուամենայնիվ, խոնարհությունն այսօր ճիշտ չի ընկալվում. աշխարհիկ մտածելակերպ ունեցող, հոգեւորից հեռու մարդիկ չեն ընկալում խոնարհությունը՝ այն համարելով կամքի թուլություն, հոգու անզորություն: Թույլ մարդը կարո՞ղ է խոնարհ լինել, չէ՞ որ խոնարհ մարդը նախ եւ առաջ ունի ամուր, զորեղ կամք, հետեւաբար չի կարող թույլ լինել...**

- Խոնարհությունը վախկոտության հետ չպիտի շփոթել: Վախկոտությունը ստոր մեղք է, որը ծնում է բազում այլ մեղքեր: Մինչդեռ առաքինի եւ խոնարհ մարդն ամենաքաջ մարդն է: Ինչպե՞ս կարող է վախենալ նա, ում մեջ Աստված է բնակվում, որովհետեւ Աստծուց վախեցող մարդը ոչնչից չի վախենում: Խոնարհ մարդը պատրաստ է հանուն Աստծո մինչեւ վերջ պայքարել, ընկերոջ համար զոհաբերությունների գնալ: Ուրեմն՝ խոնարհ մարդն ամենաքաջ մարդն է իրականում:

**- Ինչպե՞ս է ձեռք բերվում ճշմարիտ, իրական խոնարհությունը:**



- Խոնարհամտությունը գալիս է մեղքի գիտակցությունից. մարդը պիտի իրական աչքով տեսնի իր եսը, քննի իրեն, տեսնի իր սխալները, մեղքերը, զղջա ու խոստովանի դրանք, խոնարհվի իր մեղքերի բեռան ծանրության տակ: Մարդը խոնարհություն է սովորում՝ Տիրոջից մեղքերի թողություն եւ ողորմություն խնդրելով: Իսկ ովքեր իրենց անմեղ են համարում, չեն կարող խոնարհ լինել:

**- Հա՛յր սուրբ, իրենց խոնարհ համարող մարդիկ հաճախ բարկանում եւ ըմբոստանում են փոքրինչ դիտողության կամ նույնիսկ խրատի դեպքում: Մինչդեռ խոնարհը կամենում է իր թերությունները տեսնել՝ դրանք շտկելու համար...**

- Սա արդեն ոչ թե խոնարհության, այլ հպարտության նշան է: Մեկ օրինակ բերենք «Հարանց վարքից»: Մի եղբայր ոչ ոքի չէր հակառակվում, ինչ ասում էին, համաձայնում էր: Մի օր նրան հարցնում են, թե ինչո՞ւ ոչ ոքի չի հակառակվում. գուցե սուտ են խոսում, իսկ ինքը մասնակից է լինում նաեւ այդ ստի՞ն: Այդ եղբայրը խոնարհաբար պատասխանում է. «Միգուցե», այսինքն՝ նույնիսկ այդ պարագայում էլ չի հակառակվում: Իրական խոնարհության մեջ մեծ իմաստնություն կա: Նա, ով իր անձն Աստծու առջեւ խոնարհել է, լավ գիտի Աստծու ճանապարհները. Աստված շատ պարագաներում խոնարհվում է մարդկանց առջեւ եւ հազվագյուտ դեպքերում՝ ընդվզում:

**- Հա՛յր սուրբ, հիշենք մարդ արարածի հանդեպ Աստծո կատարյալ սիրո եւ խոնարհության գերագույն դրսեւորումը՝ Ոտնլվան. երկնքի ու երկրի Արարիչը խոնարհվեց հողի՝ մարդու առջեւ՝ լվանալով աշակերտների ոտքերը: Կարո՞ղ ենք ասել, որ մենք, իբրեւ գերագույն օրինակ, չափանիշ պիտի ունենանք այդ խոնարհությունը:**

- Անշուշտ, որովհետեւ Տերը, լվանալով աշակերտների ոտքերը, պատգամում է. «Մի օրինակ տվի ձեզ, որ ինչպես ես ձեզ արեցի, դուք էլ նույն ձեւով անեք»: (Հովհ. ԺԳ 15): Մենք մեր հոգու աչքերով կարող ենք տեսնել, որ օրվա ընթացքում Աստված բազմաթիվ անգամներ մեզ խոնարհվելու առիթներ է տալիս: Փորձությունների ժամանակ պետք է ունենալ ճիշտ հոգեվիճակ. եթե մենք փորձությունները համարում ենք Տիրոջ կողմից եկած ողորմություն, խոնարհության առիթ, ապա ընդունում ենք եւ խոնարհվում: Մի օրինակ բերենք. եկեղեցու սպասավոր մի մարդ աղոթում էր Աստծուն՝ խնդրելով իրեն խոնարհություն սովորեցնել: Հաջորդ օրը եկեղեցի են գալիս մի խումբ մարդիկ՝ կամենալով եկեղեցու տարածքում խնջույք անել: Նա խոնարհաբար զգուշացնում է, թե չի կարելի եկեղեցու տարածքում աղմկել, խնջույք անել: Եվ մեկն այդ մարդկանցից սկսում է ամենավերջին հայհոյանքներն ուղղել հոգեւոր սպասավորի հասցեին, վիրավորել նրան, բայց վերջինս, թեեւ կարող էր պատասխան տալ, ուներ լծակներ նրան «ոչնչացնելու», սակայն խոնարհաբար լռում է՝ կանգնելով այդ հայհոյանքների տեղատարափի տակ: Հետո նա խոստովանում է, որ այդ պահին իր հոգին ցնծության երանության մեջ էր, արտասուքների վտակներ էին հորդում նրա աչքերից... Մենք ամեն առիթ պետք է օգտագործենք խոնարհվելու եւ ոչ՝ ընդվզելու համար:

**- Կարո՞ղ ենք ասել, որ նույնությամբ չպատասխանելը կարող է օգնել նաեւ դիմացինին՝ այդ խոնարհությունից պատկառելու, ազդվելու եւ, ի վերջո, փոխվելու:**

- Ս. Ներսես Շնորհալին բոլորին «լույս» էր կոչում: Երբ մեկը բարկության արժանի արարք էր գործում իր հանդեպ, խոնարհաբար ասում էր. «Լո՛ւյս, եթե ես չխնայեի, կբարկանայի քեզ վրա. սակայն չբարկանալով ե՛ւ ինձ եմ խնայում՝ մեղքի մեջ չընկնելով, ե՛ւ քեզ եմ օգնում դուրս գալ այդ վիճակից»: Խոնարհության մեկ այլ օրինակ հիշենք. մի կույս, գալով վանահոր մոտ, ասում է. «Հա՛յր սուրբ, հասել եմ բավական շատ առաքինությունների, անգիր գիտեմ Հին եւ Նոր Կտակարանները, աղոթում եմ, ծոմ պահում, երկրպագություն անում եւ այլն»: Վանահայրը հարցնում է. «Երբ քեզ անարգում են, ընդունո՞ւմ ես»: Նա ասում է. «Ո՛չ»: Նորից է հարցնում. «Իսկ երբ գովում են, հպարտանո՞ւմ ես՝ գովեստները քեզ վերագրելով»: Նա պատասխանում է. «Այո՛, քիչ են ասում, ես արժանի եմ ավելիին»: Եվ վանահայրն ասում է. «Գնա՛ եւ սովորիր Ավետարանները, որովհետեւ ոչինչ չգիտես»:

*Շարունակությունը՝ էջ 8*

# ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

## (1897-1937)

*Սկիզբը՝ էջ 4*

Այս պայմաններում հայրենիքի կորստի տագնապներն սկսում են որոշակիությունից հեռանալ եւ հույսի ու սպասումի ակնկալիքներով կառչել հեղափոխության բերած նոր տրամադրություններին: Դա ոգեւորում է բանաստեղծին, սակայն սոսկ որպես ռոմանտիկական տարերք, որ ուժգնացել էր անելանելի կացության մեջ փրկության ելք որոնելու ճանապարհին: Դա նաեւ հայրենիքի իրական վիճակը եւ փրկության երազանքը համատեղելու անհնարին թվացող փորձ էր, ինչը եւ դառնում է նոր կասկածանքների ու ողբերգական ապրումների արտահայտություն: Ասվածի վկայությունն է *«Ինչպես երկիրս անսփոփ...»* բանաստեղծությունը.

*Ինչպես երկիրս անսփոփ, ինչպես*
*երկիրս բախտազուրկ,*
*Ինչպես երկիրս ավերակ ու արնաներկ -*
*Մխում է սիրտս հիմա որբ, մխում է*
*սիրտս բախտազուրկ,*
*Մխում է սիրտս՝ ավերակ ու*
*արնաներկ...*
*...Ինչպես երկիրս անսփոփ, ինչպես*
*երկիրս ավերակ -*
*Այնպես էլ սիրտս - անսփոփ, այնպես էլ*
*սիրտս - անուրախ,*
*Վե՛րք է դառնում սրտիս խորքում*
*օրերի փա՛յլը այս իրակ -*
*Ախ, սի՛րտ իմ՝ բո՛րբ ու անսփոփ,-*
*երկի՛ր իմ՝ ո՛րբ ու անուրախ...*

Այս տրամադրությունները տարածվում են «Ողջակիզվող կրակ» շարքի «Առավոտ» ենթաբաժնի բանաստեղծությունների մեջ: Ներքին հակադրության մեջ լինելով նույն շարքի «Իրիկուն» ենթաբաժնի գործերի հետ՝ դրանք բերում են նաեւ ոգու հարություն եւ փորձանքներին դիմագրավելու տոկունություն: Կարմիր նժույգների ու կարմիր երգերի, հուր ու կրակի, բոսորի ու վառվող ապագայի պատկերներով, առույգ տրամադրությամբ Չարենցը ողջունում է սպասումը. *«Հողմի պես հնչեղ երգեր // Հնչում են սրտում իմ ջինջ, // Տեսնում եմ - մի նոր երկիր // Բացվում է իմ դեմ քիչ-քիչ...»*:

Այս սպասումն ու դրան հաջորդող խանդավառ տրամադրությունները հիմք են դառնում «Սոմա» (1918) եւ «Ամբոխները խելագարված» (1919) պոեմների համար:

**«Սոման»** տրամադրությունների ներքին որոշակի զարգացմամբ ընթացող քնարական բռնկումների շղթա է: Նախ՝ ի՞նչ է Սոման: «Սոմա» բառն առաջացել է հին հնդկերեն «քամել» բառից: Սոման Ինդրայից ու Ագնիից հետո երրորդ աստվածությունն է: Սոման՝ որպես խմիչք, ունի բուսական ծագում: Խմողին գցում է զմայլվածության վիճակի մեջ: Սոման կենսական ուժի ակունք է, որ բերում է երջանկություն ու բարիք: Պոեմը



Չարենցը հրատարակել է *«Նոր վեդյան պոեմ»* ծանուցումով եւ «Ռիգվեդայից» հղած *«Սո՛մա, դու վերջին ազատություն»* բնաբանով:

«Սոմա» պոեմն ամբողջությամբ պաշտամունքային ծիսակատարություն է: Սոման կերպավորվում է ե՛ւ որպես Աստված, ե՛ւ որպես պաշտամունքային խմիչք: Բանաստեղծն այստեղ հանդես է գալիս Գանգեսի քուրմի երեւույթով, իր սերն է խոստովանում Սոմային եւ, նրանով արբած, կյանքն ընծայում *«վառվող աշխարհին»*:

Նախերգանքի բնույթ ունեցող առաջին մասում բանաստեղծը ներկայացնում է իր երգի առարկան: Անմիջապես դրանից հետո երգի առարկան վերածվում է դարեր շարունակ որոնված ազատության խորհրդանշանի, որն անհուսության պահերին փրկության վերջին երաշխիքն է: Հաջորդում է Սոմայի՝ որպես սրբազան խմիչքի նկարագրությունը եւ դրա փոխաբերական իմաստի բացահայտումը. *«Օ, սրբազան հա՛րս դու ազատության, // Դու - ազատություն»*: Արբեցման տարերքը նախ վերածվում է երգի, ապա՝ պարի, այնուհետեւ՝ ամեն ինչ հիմնահատակ կործանելու մոլուցքի եւ պայքարի ոգու. *«Ամբոխները զրահապատ // Ծափ են զարկում ու պարում, // Ջա՛հ է դարձել ամեն մի մարդ // Կրակապատ աշխարհում»*:

Պայքարի ոգին ընդլայնվում է եւ վերածվում հրավերի կոչի՝ ուղղված բոլորին: Այդ հրավերը համախմբում է ամբոխներին, նրանց տանում պայքարի ու հաղթանակի, որի խորհրդանիշը հին աշխարհի կործանումն է: Պոեմի իններորդ մասը, ինչը, ըստ էության, խոսքի իններորդ ալիքն է, դառնում է ասելիքի բարձրաթռիչ վերջաբանը:

Վերափոխված կյանքի պատկերը դառնում է մի նոր *«ոսկի տեսիլ»*, իսկ այդ վերափոխման ուժը՝ սերունդների կյանքի ուղին իմաստավորող գրավական: Քնարական առանձին բռնկումները ներքին կապով ձուլվում են մեկ ամբողջության մեջ եւ ի հայտ բերում տրամադրության զգացական վերարտադրման մի յուրահատուկ ձեւ, որը պոեմի միանգամայն նոր տարատեսակ է:

*Շարունակելի*

**Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ**
**Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր**

# ՓԱՐԱՎՈՆ ՄԻՐԶՈՅԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԸ



Երբ արարումի ներշնչանքն ու մղումն իրենց մեջ ունեն թռիչք, վեհի, բարձրագույնի գաղափարական խտացման ընկալում, մատուցման յուրահատուկ ձեւ ու ոճ, ապա օժտված արվեստագետի ստեղծագործական ապրումի յուրաքանչյուր ծնունդ մի նոր ճախրանք է:

Այս խելակորույս աշխարհի ամենօրյա սովորական դարձած պտույտի մեջ, երբ չասվածն անգամ նմանվում է կրկնության, ու երբեմն անհնարին է թվում նոր խոսք ասելն ու ձեռագիր թողնելը, տաղանդավոր միտքը հավերժության պարույրներից պոկում է ժամանակների մեջ թանձրացող նորի մասնիկներն ու դարձնում սկիզբ…

Գեղանկարիչ Փարավոն Միրզոյանի վերջին շրջանի ստեղծագործական ասելիքխտացումներն արվեստագետի համոզմունքների հանրագումարն են: Մեծակտավ ստեղծագործությունների համայնապատկերային շարքը գլխավորեցին «Հայաստան» եւ «Արցախ» պաննոները: Գաղափարական առումով ազգային հենակետ ունեցող այս համարձակ աշխատանքները երկար ժամանակ գտնվեցին հանրության ուշադրության շրջանում՝ թողնելով տարատեսակ տպավորություններ, որոնց բազմազանությունը նույնանում էր նրանով, որ ամեն մի ինքնուրույն կարծիք եւ վերաբերմունք իր մեջ կրում էր երկարատեւ, մոռացված սպասումի իրականություն դարձած հայտնության անակնկալը… Բնականաբար, նման իրավիճակը ենթադրում եւ պահանջում է իր ժամանակը՝ եղածին համարժեք վերաբերվելու, գնահատելու եւ նույնիսկ տեսողական-շոշափելին ընկալելու համար: Իսկ իրական արարումն ու հոգեհոսքը ենթակա չեն ժամանակի քմայքին…

Ստեղծագործելու շնորհով օժտված գեղանկարչի վրձինն ինքն է տալիս պատասխան ժխտումը. գույնի ու գաղափարի, իրականության ու երազի, անցյալի ու ապագայի իր համադրության շնորհիվ կյանքի է կոչվել այն, ինչն արվեստի գնահատելի գործ լինելուց զատ՝ Փարավոն Միրզոյանի աշխարհաճանաչողության լավագույն դրսեւորումն է ժամանակակից ազգային գեղարվեստում:

«Ծովից ծով Հայաստանը» եկավ ամբողջացնելու նկարչի նախորդ երկու պաննոների շարքը. այն հավաքական դարձնելով գաղափարը՝ մեկտեղում է նաեւ հայ մարդու գենետիկ սահմանազգացողությունն ու ՀԱՅՐԵՆԻՔ ասվածի աշխարհագրական տարածաչափությունը: Միրզոյանի ներաշխարհում երազի ու իրականության բախումը շռայլորեն սփռվում է կտավին՝ լավատեսության հաղթական տրամադրությամբ, տեր եղած մարդու՝ վերստին ու մեկընդմիշտ տեր դառնալու համոզվածությամբ, ժառանգորդի պատասխանատվությամբ, որ ենթադրում է ապագային ուղղված հայացք՝ անցյալն ու ներկան մեկտեղած գիտակցությամբ:

Սա հենց նկարչի հայացքն է, ում տեսիլքը՝ «Ծովից ծով Հայաստանը», հաղթանակի կտավ է, համոզմունքի անսասանության մի խորհրդանիշ, ուր նկարիչն արձանագրում է արարչաստեղծ իր ժողովրդի առաքելությունը, նրա գոյության ու պայքարի անհրաժեշտության տիեզերական կամքը…

Եթե իր նախորդ համայնապատկերների մեջ նկարիչն արձանագրում էր ժամանակի ձեռքբերումներն ու դրանց դինամիկ ընթացք հաղորդում, ապա այս ստեղծագործության մեջ առավելապես առկա է գաղափարական հիմնաքարը, որի շնորհիվ թվում է, թե այս պաննոն է, որ պետք է լիներ առաջնեկը: Գեղանկարիչը կտավի հարթության վրա արձանագրում է դարերի տեւողություն ունեցող մի իրականություն: Այստեղ արարումի միստիկ շարժումը տարածության մեջ երեւակում է մի ժողովրդի կենսագրություն, որ աշխարհաստեղծման խորհրդին համաքայլ՝ իր գոյությունն է հաստատել ժայռեղեն մատյաններում: Ժայռապատկեր արձանագրություններով է սկսվում Միրզոյանի պատկերամատյանը, ուր կենաց խորհուրդն ամփոփված է ծաղկած ծիրանենու մեջ: Հայ ազգի հարատեւության խորհրդանիշն ասես հավերժահարս ծաղկումի մեջ է…

«Ծովից ծով Հայաստան»… Պաննո, որը պատմական հիմքի վրա բարձրաձայնվող՝ նկարչի հոգուց բխող բանաստեղծական ասք է, սիմֆոնիկ համանվագներ հաղորդող ներշնչանք, ուր հիանալիորեն արտահայտված է ծովից ծովի խորհուրդը. ողջ միջավայրն իր անբացատրելի ձգողականությամբ ենթակա է վերին խորհրդին, ուր սահմանների պատկերումն առանձնակի արտահայտություն է ստացել: Երկնակամարի վրա են միաժամանակ երկնային երկու լուսատուները, որոնք էլ իրական փոխանցողն են վերն ասվածի: Քարահունջի աստղադիտարանը համայնապատկերի այն դիտակետն է, որտեղից բացվում են միմյանց հաջորդող հազարամյակների կենսագրություն կրող իրական վկաները: Մասյաց գագաթին հանգրվանել է համաշխարհային ջրհեղեղի պատճառով ծնված ու արհավիրքից նոր կյանքի հանգրվան հասած Նոյան տապանը, Խորվիրապի հայացքը դեպի Արարատն է, դեպի նրան հաջորդող Շուշվա Ամենափրկիչ վանքն ու Գանձասարի բարձունքները, որոնք սքողված են մթնշաղի խաղաղություն ներշնչող գույների մեջ: Հեթանոսական Գառնին, քրիստոնեական Մայր տաճար Սբ Էջմիածինը, Նորավանքն ու Բյուրականը, Սարդարապատն ու Ամբերդը, որոնցից յուրաքանչյուրը ներքին, ամուր շաղկապումով ձգվում է դեպի Անիի ավերակներն ու Վան բերդաքաղաքի պարիսպները, Արագածի գագաթներից դեպի Սիփանա լեռներն ու Բզնունյաց ծովակի հեռավոր ուրվագիծը, որ ձգվում է դեպի կտավի հարթությունից դուրս շարունակելի տարածությունը, դեպի լեռնագագաթներից անդին՝ դեպի արեգակնածին արշալույսը, որով ողողված է կտավի աջաթեւյան կողմը՝ իր բնապատկերային ամբողջությամբ:

*Շարունակությունը՝ էջ 8*



Ծովից ծով Հայաստան

## Սուրբ Ներսես ՇՆՈՐՀԱԼԻ
# ՆԱՄԱԿԱՆԻ

**Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցություններ:**
**Գրաբարից թարգմանեց եւ ծանոթագրեց Սեդա Ստամբոլցյանը:**
**Հրատարակվել է Սարգիս Պետոյանի մեկենասությամբ:**
***(հատված գրքից (էջ 285-293)***



*Սկիզբը՝ էջ 5*

Իսկ թե ինչու է Աստված կամենում, որ Իր սուրբերն ու սիրելիները մարմնի նեղություն կրեն այս կյանքում եւ ոչ թե հաճույքներ ու դյուրություն, կարճ ու հստակ խոսքով բացատրենք աստվածային [գրքերի] իմաստությամբ: Մեր նախահայր Ադամը քաղցր պտղի հաճույքով կորցրեց աստվածային փառքը, անմահ կյանքն ու դրախտի վայելչությունը եւ փոխարենն ընդունեց փշաբեր երկիրը, տրտմալից, ախտալից ու տաժանելի կյանքը եւ վերջում էլ՝ մահը: Ուստիեւ ամենքի Արարիչն ու Տերը երկրորդ Ադամ դարձավ եւ անվանվեց՝ նրա բնությունից մարմին առնելով նրա փրկության համար, եւ այս կյանքի ճանապարհով ընթացավ ո՛չ հաճույքներով, այլ գերագույն առաքինությամբ՝ որպես օրինակ մարդկանց, ովքեր Նրա ճանապարհով կկամենան գնալ, ինչպես եւ Տերն Ինքն է խրատում Իր ուղեկիցներին՝ ասելով. «Ով կամենում է գալ Իմ հետեւից, թող թողնի ունեցած ամեն ինչ, ուրանա իրեն եւ իր խաչը վերցնի շարունակ» (հմմտ. Մարկ. Ը 34), այսինքն՝ զանազան առաքինությունների չարչարանքները, եւ «ապա գա Իմ հետեւից»: Եվ Քրիստոսի հետեւից այսպիսի ճանապարհով ընթացողների օթեւանները որտե՞ղ կլինեն այս կյանքի երեկոյին. ո՛չ համապատիվ ծառաների հարկերում, այլ այնտեղ, ուր Տերն է ամենքի, ինչպես եւ մեկ այլ տեղ հրամայում է [Տերը]. «Ուր Ես եմ, այնտեղ նաեւ Իմ ծառան կլինի» (Հովհ. ԺԲ 26):

Ուրեմն՝ քանի որ սակավաթիվ են այն մարդիկ, որ մտնում են երկինք անձուկ ճանապարհով ու նեղ դռնով, այսինքն՝ մաքուր կուսությամբ ու կամավոր առաքինություններով, որոնցով շարժվեցին ճգնավորների դասերը սրանից առաջ եւ սովորեցրին մեզ, ուստի Աստծո ամենիմաստ գիտությունը, որ կամենում է, որ «բոլորը փրկվեն ու ճշմարտության գիտությանը հասնեն» (Ա Տիմ. Բ 4) եւ արժանանան խոստացված անճառ բարիքներին, ոմանց թույլ է տալիս ակամա աղքատությամբ դիմադրել մարմնի հաճույքներին՝ կարոտ մնալով անհրաժեշտ առարկաներին, որպեսզի այդպիսով արդարանան, ուրիշների վրա էլ դնում է մարմնի ցավեր՝ ոմանց ժամանակավոր, ոմանց էլ մինչեւ վախճան, երբ տեսնում է, որ մարմնի առողջության պատճառով հոգին է հիվանդանում մեղքերով, որպեսզի մարմնի հիվանդություններով բժշկի հոգու հիվանդությունները՝ առանց [հիվանդի դա] գիտենալու: Սա կարելի է տեսնել երկու անդամալույծների օրինակով. մեկը նա է, որ Պրոբատիկե ավազանի մոտ էր, եւ ում ասաց Քրիստոսը բժշկելուց հետո. «Ահա առողջացար, այլեւս մի՛ մեղանչիր, որպեսզի չար բան չպատահի քեզ» (Հովհ. Ե 14)՝ ցույց տալով, որ մեղքն էր նրա երեսունութամյա անդամալուծության պատճառը, իսկ երկրորդը նա է, ում իջեցրին տանիքից [Քրիստոսի] առաջ, եւ Վերջինս ասաց նրան. «Ներված թող լինեն քո մեղքերը» (Ղուկ. Ե 20): Սրանով ցույց տվեց, որ [այդ մարդը] մեղքերի պատճառով էր կրում այդ ցավերը, եւ երբ Աստված ներեց նրա մեղքերը, որ նա կրում էր հոգում, այդ ժամանակ մեղքերի պատճառով հիվանդացած նրա մարմինը եւս առողջացավ: Ովքեր այսպիսի ցավերը որպես բժշկության դեղ են ընդունում Աստծուց եւ Նրանից գոհանալով՝ համբերում են նեղություններին, կամավորապես տանում ակամա ցավերը, Աստված այնպես է համարում ու վարձատրում, որպես թե նրանք այդ նեղությունները կամովին կրեցին Նրա պատվիրանի համար: Իսկ ովքեր տրտնջում են Աստծուց եւ Նրա դատաստանն անիրավ կոչում՝ [ասելով]. «Ինչո՞ւ է չարերին թույլ տալիս, որ առողջ ապրեն, իսկ մեզ, որ նրանց նման չենք, թույլ է տալիս չարչարանք ու նեղություններ կրել», այսպիսիք եւ նեղություններն են կրում, եւ վարձից զրկվում, ինչպես քառասուն վկաներին լքածը: Եվ սա պատահում է նրանց տգիտությունից ու անհավատությունից, ովքեր չեն հասկանում Աստծո դատաստանների խորությունը, թե ինչու է ոմանց կամենում բժշկել նախասացյալ դեղերով, իսկ ոմանց անտեսում: Չե՞ք տեսնում, որ բժիշկները նույնն են անում. ովքեր անբուժելի ցավից են տառապում, նրանց ձեռք չեն մեկնում խարանմամբ կամ դեղերով, իսկ նրանց, ում մասին գիտեն, որ բժշկության հնար կա նրանց համար, ամեն միջոցով ջանում են առողջացնել: Այդպես էլ հոգիների ու մարմինների ճշմարիտ Բժիշկը՝ Աստված, նայելով մարդկանց սրտերին, ում մեջ որ բարու մաս է տեսնում, նրանց պատճառում է աղքատություն կամ ցավեր եւ կամ երկուսն էլ, որպեսզի սակավ բարու սերմը մեծ պտղավետությամբ աճեցնի, իսկ անբուժելիներին, որոնց տեսնում է մեղքերի ցավերի մեջ, ձեռք չի մեկնում՝ հիվանդությամբ կամ աղքատությամբ բժշկելու, այլ թույլ է տալիս, որ իրենց կամքի համաձայն շարժվեն մինչեւ վախճան, եթե մի փոքր բարուց ունեն հատուցում, որպեսզի անպատասխան գնան այն [աշխարհի]:

Բայց ամեն հիվանդություն չէ, որ նախասացյալ պատճառից է: Շատերը ծնվում են այն տարրերի հակառակությունից, որոնցից է նաեւ մեր մարմինը: Դրանք հավասարապես կրում ենք [բոլորս], քանի դեռ այս ախտավոր բնության մեջ ենք, լինենք արդար թե մեղավոր: Իսկ այն [հիվանդությունը], որն Աստծուց է լինում, հայտնի է դառնում իմաստուններին, երբ իմաստությամբ քննում են Սուրբ Գիրքը:

*Շարունակությունը՝ էջ 8*

# ՓԱՐԱՎՈՆ ՄԻՐԶՈՅԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԸ


Արցախ

Սկիզբը՝ էջ 7

Կտավի ձախ կողմում Էրեբունի-Երեւանն է՝ հայոց պետականության հին ու նոր վկան՝ իր Արգիշտի արքայի բերդաքաղաքի տիրական շնչով ու քաղաքամայր Երեւանի ժամանակակից կառույցներով, որոնք խորհրդանշական բնույթ են կրում՝ պետականության վերագտնման արձանագրությամբ:

Լեռնաստանի մեջ վեր են խոյանում հայոց եկեղեցիները, մշակույթի ու պատմության, մաքառումի ու հաղթանակի, գիտության ու հայ մտքի լուսավորության խորհրդանիշ ծառայող կառույցները: Պատահական չէ, որ նկարիչը ժայռեղեն բարձրավանդակների վրա է պատկերում դրանք, անկումներից դեպի վերելք առաջնորդող ու պայքարի տանող անտես ու տեսանելի հոգեվիճակների փոխանցումով պատկերում իր ժողովրդի անհանգիստ ճակատագիրը, ժողովուրդ, որ ապավինած իր հավատին՝ ներքին լույսով է պեղում ու հայտնաբերում իր ապագան... «Ծովից ծով Հայաստանը» գերծ է ցավի խորհրդանիշներից, սակայն, կտավի կենտրոնական հատվածում պատկերված դատարկ բարձրավանդակը կարծես թափուր պատվանդանն է այն նոր արարումի, որը վերագտնումի խորհրդանիշը դառնալու գաղափարն է ամփոփելու իր մեջ:

Զարմանալի շարունակելիություն են ունենում Միրզոյանի ազգային թեմաներ արծարծող կտավները, նկարչի ծննդավայրն է պատկերում «Սյունիք» պաննոն: Պատահական չէ սեփական ծննդավայրը վերապատկերելու պահանջը, որի իրողությունն արձանագրելով՝ զարմանալի փաստի ենք առնչվում. Հայաստան, Արցախ, Հայք պատկերող վրձինը շրջվում է ետ՝ կարծես իր որդիական պարտքը տալով այն թանկ մասնիկին, որ կոչվում է ծննդավայր:

Սյունյաց լեռնաշղթան իր ձյունածածկ գագաթներով ձգվում է կտավի վրա՝ համայնապատկերի հարթությանը տալով յուրահատուկ խորություն, նկարչի վրձնած շերտերի մեջ իրենց վեհության տիրական ներկայությունը հաղորդելով Տաթեւա վանքի երկինք պարզած գմբեթներին:

Ի տարբերություն նախորդ երեք պաննոների՝ «Սյունիքը» բաղկացած է երկու առանձին կտավներից, որոնք իրենց ինքնուրույնությամբ հանդերձ՝ ձգտում են լրացնել իրար եւ իմաստային ամբողջություն հաղորդել միմյանց՝ դառնալով նկարչի ծննդավայրի համապարփակ վերամարմնավորումը:

Քարահունջի աստղադիտարանի միստիկ ներկայությունը գունապնակի հատուկ ընտրության շնորհիվ թանձրանում է իրիկնացող լույս ու ստվերի մեջ ընկղմվող՝ նկարչի ծննդավայրի խորհրդավոր պատկերի մեջ: Մարգարենե՞ր են նրանք, թե՞ ժամանակներն իրենց մեջ ամփոփած ու իրենց միջոցով ժամանակները զտող, անհիշելին հիշողության մեջ պահած, հայացքը դեպի տիեզերականը հառած քարե մոգեր, որ ուխտավորների նման իրենց համրաքայլ, քարե քայլքով դիմահայաց են երկրայինի ու երկնայինի միջեւ բարեխոս դարձած հոգեւորի կացարանին՝ հայոց եկեղեցուն... Նրանք երկուսն էլ այն երրորդ աչքն են, որ հասարակ մահկանացուին տանում են լույսի ճանապարհով... Հեթանոս աշխարհի հնագույն վկաներ եւ քրիստոնեական հոգեւոր դարբնոց՝ եկեղեցի... Երկուսն էլ նյութական, ճարտարապետական տեսքով են միմյանցից տարբեր, բայց երկուսն էլ խորհրդանիշն են մարդ արարածի ինքնաբացահայտման ու կատարելության տանող ճանապարհի, հավերժական ու անխոնջ փնտրումի: Պատահական չէ փոն ծառայող թեթեւ ուլտրամարինի վրա իշխող վարդագույն երանգը, որը նման է մոխիրների մեջ անթեղված այն կրակին, որ շարունակում է կայծկլտալ՝ հավատարիմ նոր հուր երկնելու իր առաքելությանը:


Սյունիք

Երազի նման, երազի միջից երեւակվող, հույզերով ու ապրումներով թանձրացած, նկարչի հոգուն հարազատ մի մասունք է «Սյունիք» պաննոն, որ արձագանքում է մի պարզ ճշմարտություն. յուրաքանչյուր մարդու հայրենիքն ու այն ունենալու գիտակցությունն սկսվում են վերջինիս ծննդավայրից:

Հատկանշական է նկարչի յուրաքանչյուր պատկերի կոլորիտային համադրությանը համահունչ տեղադրման կուլտուրան, որը ներքին իմաստավորում ունի եւ ապացուցում է ասելիքին հատուկ տեղադրումի ներքին, համակարգված սխեման, որի հաջողության շնորհիվ պոետիկ հանգավորման մեջ է հավաքվում այս երկու մեծակտավ ստեղծագործությունների ողջ միջավայրը:

Հայոց պատմության հաստափոր հատորները կարծես իրենց խորհրդանշական կնիքն են թողել այս պաննոների մեջ:

Հայրենանվագ այս մեծակտավ շարքի շնորհիվ գեղանկարիչ Փարավոն Միրզոյանին կարելի է անվանել հայ ժամանակակից կերպարվեստում ազգային, գաղափարական թեմային լավագույնս անդրադարձած, ներկայիս վավերական անուններից մեկը, ում համարձակությունն ու տաղանդը, ասելիքն ու անսպառ պրատումները գալիս են իր արմատներից, որոնց տարածականությունը նույնպես պատահական չէ՝ լեցուն իր լայն աշխարհընկալման վառ ապացույցներով. այն կրում է գենետիկ բնագդն աշխարհաբնակ առաջին ցեղի:

*Արմինե ՄԵԼԻՔ-ԻՍՐԱՅԵԼՅԱՆ*
*Արվեստաբան*

# ՀՈՎԻՎՆ ՈՒ ԻՐ ՀՈՏԸ

Սկիզբը՝ էջ 6

**- Խոնարհության հակառակ մոլությունը հպարտությունն է, որի դեմ պայքարելու լավագույն միջոցը խոնարհություն ձեռք բերելն է: Իսկ ի՞նչ առաքինություններ են ծնվում խոնարհությունից:**

- Բազում առաքինություններ՝ համբերություն, ներողամտություն, գութ, կարեկցանք, ողորմություն, մարդասիրություն... Խոնարհ մարդն ամուր պատնեշ է այդ առաքինությունների համար, կարող է դրանք իր մեջ պահել: Սուրբ Սարգիս Շնորհալին ասում է, որ «Մեղքն ու շնորհը նման են միմյանց՝ հայտնելուց վերանում են, որովհետեւ մեղքը խոստովանելուց ջնջվում է, իսկ շնորհը, ի ցույց մարդկանց հայտնելուց, վերանում»: Խոնարհ մարդը երբեք չի ասում, որ առաքինի է, այլ խոստովանում իր մեղավոր լինելն Աստծու առաջ: Սուրբ Գրիգոր Նարեկացին ասում է, որ իր մեղքերը նման են օդում տարածված փոշու հյուլեներին: Նա այնքան մանրամասն էր տեսնում մեղքերը, որ հասկանում էր դրանց անթիվ-անհամար լինելը՝ փոշու հյուլեների չափ: Եթե մարդն իրական հոգեւոր աչք ունենա, կտեսնի իրեն շրջապատող մեղքերը՝ չար խորհուրդներ, զգացողություններ, չար սովորություններ, որոնցից ինքը մշտապես հաղթվում է:

**- Ի՞նչ խորագիտություն պիտի ունենա խոնարհ մարդը, որպեսզի իր խոնարհությունը չշահագործվի այլոց կողմից, ինչը հաճախ հանդիպող երեւույթ է մեր օրերում:**

- Խոնարհությունը կարող է անգիտաբար շահագործվել, սակայն երբ սկսում են հասկանալ ու գնահատել դիմացինի խոնարհությունը, այլեւս հարգանքի ու պատկառանքի են արժանանում: Իսկ եթե չի հասկացվում, երանելի է այդպիսին, որովհետեւ չարչարվում է հանուն Քրիստոսի: Սակայն լինենք զգուշավոր եւ լավ քննենք մեզ. գուցե իրականում ամենեւին էլ խոնարհ չենք: Սուրբ Գրիգոր Տաթեւացին ասում է, որ մենք հաճախ պատժվում ենք մեր մեղքերի ու սխալների համար, սակայն համարում ենք, թե արդարության համար հալածվեցինք, ինչպես աղանդավորներն են այսօր կարծում... Նաեւ պատահում է, որ մեզ ճշմարտապես հանդիմանում են՝ տեսնելով մեր մեղքը, իսկ մենք համարում ենք, թե անարդարացի մեղադրեցին մեզ: Այդպես չէ. մենք պատժվում ենք մեր սխալների համար:

**- Հա՛յր սուրբ, իրական խոնարհություն ձեռք բերել ցանկացող մարդն ի՞նչ զոհողությունների պիտի գնա այդ ճանապարհին:**

- Ինչի՞ է ձգտում մարդը. առաքինության, կատարելության, սակայն առաջին հերթին մենք պիտի ձգտենք մեղքերի թողության, սրբվելու: Այդ դեպքում կլինենք ե՛ւ առաքինի, ե՛ւ կատարյալ: Ուրեմն՝ մեղքերի խոստովանությամբ խոնարհվենք, որպեսզի Աստված մեզ բարձրացնի:

## Սուրբ Ներսես ՇՆՈՐՀԱԼԻ
# ՆԱՄԱԿԱՆԻ

Սկիզբը՝ էջ 7

Սա նույնպես պիտի ասենք. աղքատությունն ու նեղությունը, որոնք Աստված տալիս է նեղյալներին, ոչ միայն նրանց մեղքերից մաքրելու համար է, ինչպես վերեւում գրեցինք, այլեւ առողջների ու հարուստների, որպեսզի [նեղյալներին] գթալով ու ողորմելով՝ մեղքերի թողություն ստանան Աստծուց եւ ողորմություն ընդունեն Նրանից՝ ըստ Քրիստոսի ճշմարիտ երանության, որ ասում է. «Երանի՜ ողորմածներին, քանզի նրանք ողորմություն կգտնեն» (Մատթ. Ե 7): [Սա այսպես է], որպեսզի բոլո՛րն արժանանան հասնելու խոստացված բարիքներին. աղքատները՝ աղքատությամբ, մարմնի ցավերով չարչարվողները՝ չարչարանքով, նեղյալները՝ նեղություններով, երբ գոհությամբ են տանում նեղությունները, չարչարանքներն ու աղքատությունը եւ Աստծո պատվիրանների համաձայն մաքուր կյանքով ապրում, իսկ հարուստներն ու փափկակյացները այդպիսիների հանդեպ ողորմած լինելու միջոցով հասնեն մեղքերի քավության ու երկնքի բարիքներին՝ քաղցածներին կերակրելով, մերկերին հագցնելով, օտարականներին հարկից ներս առնելով, հիվանդներին ու բանտարկյալներին հոգ տանելով ու մխիթարելով: Ո՛չ ժլատությամբ, որպեսզի երբ յուղը պակասի, նրանց լապտերները չմարեն, ինչպես հիմար կույսերինը, այլ մարգարեի խրատով՝ զվարթառա՛տ սրտով թող սփռեն ու տան տնանկներին: Որովհետեւ ով սերմանման ժամանակ խնայում է ցորենն ու ժլատությամբ ցանում հողում, հունձքի ժամանակ ժլատությամբ էլ կհնձի, իսկ ով առատապես է սերմանում, բազմապատիկ աճած ցորենի խրձերով կլցնի իր գիրկը: Եվ նա էլ կլսի Քրիստոսի երանավետ խոսքը. «Եկե՛ք, Իմ Հոր՛ց օրհնվածներ, ժառանգե՛ք ձեզ համար [աշխարհի] սկզբից պատրաստված արքայությունը» (Մատթ. ԻԵ 34): Թող սրան ամենքս հասնենք՝ թե՛ ովքեր թշվառ կյանքով են ապրում, թե՛ ովքեր այսպիսիների հանդեպ ողորմությամբ գնում են երկնքի արքայությունը, մեր Տեր Հիսուս Քրիստոսով, Ում փառք եւ զորություն հավիտյանս. ամեն:

# Կարգալույծ է հռչակվել Տ. Հայազատ քահանա Մարտիկյանը

Օգոստոսի 25-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Տ. Հայազատ քահանա Մարտիկյանը (Ռումինիայի հայոց թեմ)՝ իր դիմումի հիման վրա:

Կարգալույծ հռչակված հոգեւորականն այսուհետ կդասվի աշխարհականների շարքը եւ կկոչվի ավազանի անունով՝ Գրիգոր Մարտիկյան:

*Լրատվական նյութերը՝*
*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ*

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
**Համարի պատասխանատու՝**
Նարե Սարգսյան
**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին
**Հեռախոս՝ 517197**
**Էլ.փոստ՝ qh@etchmiadzin.am**
**web կայք՝ kh-tert.livejournal.com**
Ստոր. տպագր. 1.09.2011 թ.
**Տպաքանակը՝ 2100**
**Գինը՝ 50 դրամ**